ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ — Թիւ 2,503 — Կ. ՊՈԼԻՍ 1904, ՌԵԿՏԵՄԲԵՐ 6—19 — 12 ՇԷՎՎԱԼ, 1322—6 ՖԵՒՆՈՒԱՐ ՀՎ" 1320 — ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Բիւզանդիոն

ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՅ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

PUZANTION
Journal Arménien Quotidien, Politique, Financier et Littéraire
Directeur - Propriétaire
PUZANT KÉTCHIAN
Bab-Ali Djaddéssi, № 23-25
CONSTANTINOPLE

بوزانتيون
ايرمنجه يومى وسياسى غزته، صاحبى وباش محررى
بوزانت كچيان
دائره‌نك باب عالى جاده‌سنده ٢٣-٢٥ نومرولو محلّه‌سى
قسطنطينيه

Պալատական Տեսարաններ

ԽԱՓԻ ԺԱՊԱՒԷՆԸ

Բուժէլի—Ռավաքի ճամբան, Սարբեար—Եէնիմահալլէ—Բազարպաշիի «երից թաղից» բերան է։ Օրն ի բուն Ցերբլատաք գացողները, Օթուզպիրի սիրահարները, Ռավաք կամ Պողազ Ցէնէրի երթեւեկողները, Սեւ Ծովի չռելովը ու չունչովը գինովցնալ փափաքողները, ինչպէս նաև որոշ տեղ մը երթալու միտք չունեցող, այլ միմիայն, սանկ պզտիկ պատյտ մը ընելու տրամադրութիւնը ամենքն ալ, այլ խորհրդաւոր, վայրենաբոյր ու բազնահրապոյր ճամբէն անցնիլ դառնալու պարտաւոր են։

Ռավաքի ճամբան, դեղ, օձապտոյտ ու խաքի գոյնով անհուն ժապաւէն մըն է, բլուրներու չղթայի մը կանանչազարդ ու մաղեղ կուրծքին վրայէն սողսկող, որ ժառիթէրի մը պէս կ'գալարի Ցերբլատաքի Ժեռուտ ձուկերուն վրայ, յորձանքի մը պէս կ'պտուտքի Ռավաքի ծովեզերեայ ժանեակներուն մէկ և կ'երկարի, կ'երկարի անկէց անդին, անծայր ու ատայի, մինչեւ նեղուցին բերանը, Սեւ Ծովի յաղի ու խրխոտ պաղութին վրայ դառնալու ու ետին, կրնայի ը վար անհետանալու համար։

Իրիկուններդ մանաւանդ, ամբողջ ամառուան եղանակին մէջ, մեծ ոգեւորութիւն կ'ստանայ ան և կատարեալ ժամագրավայր մըն է ամէն կարգի անձերու, իրենց նաւերը կամ տալէաններդ գացող եկող ձկնորսներէն մինչեւ գեռափրիթի գեղուհիները, ամբի վրայ վաճառորդներէն, խեղճուկ գեղջուկներէն, մինչեւ բարձր դասու տիկիններ ու ընտանիքներ՝ որոնք օդ առնելու կամ տեսարանը վայելելու համար կուգան հոդ չատ անգամներ, և իրենց փայտէն արուգազարդերով, լերան լերկ կողերուն վրայ կամ վայրենի խոտերուն ու խուխներուն մէջ բռնած չարժուն ածուներու ու ծաղիկներու տպաւորութիւնը կ'ընեն։

Զորեքշաբթի օր մը, իրիկուան դէմ, ընկերոջ մը հետ, մեր անփոյթ ծուլութիւնները համնմատ, դէպ ի Ռավաք կ'երկնանք։ Երկու կողմէն ծովին տեսարանը խափանող խիտ տուներու չարքին մէկէն դուրս նետուելով, Բազարպաշիի պղոտացային ծայրագոյն կէտէն, թեթեւ զառիվեր մը միայն կ'ելլանք և ահա ծայր կուտայ մեր սրտական, աներեւակայելի, դրախտային ուղին որ ա'լ անկէց անդին չատ քիչ դարուվար ունի և ամէն կողմէն ծովահայեաց, բարձրադիր, լայնաձիր տեսարան մը կ'ընդգրկէ։ Այդ իրիկունը, առջի վայրկեանէն, մեր ուշադրութիւնը ու զարմանքը կ'գրաւէ այնքանով և օտարոտի բազմութիւն մը որ կ'երթայ կուգայ, կ'երկարի, թէ' ցամաքին և թէ ծովին վրայ։ Խումբ, խումբ ընտանիքներ, մեծ, պզտիկ, երիտասարդ, կնիկ, երկի մարդ, քալելով, խօսելով, խնդալով կ'տարուբերին անծայրածիր տրանտին վրայ։ Նոր գացողները, կամ ու զուարթ, փէչերին ժոզված կ'ցատքռտան ու կ'քթքշան, վերադարձողները, մանաւանդ ծերուկներ, թոյլ, յոգնած, ալքատացող երեւոյթներ ունին։ Մավրօ մօլոզի բանաեղծն է եղեր այդ օրը։

Կ'սանդանակ։ Հոս, հարիւր քիլօնոց, քայքայուն ծաւալով կիներ, որոնք իրենց ծանրութեան մէկ չատ կարեւոր մասը կուրծքերնուն վրայ կ'կրեն ապահովաբար, վայրադարժի պէս ֆշալով, ճորճորալով, ճարահատ, հովանոցին կրթնելով ու քրտնելով կ'քալեն։ Ծոխօզով ու եազմայով հինօքէնքի կիներ, ճամբուն ևզերքին վրայ, խոտերուն մէջ, մէկմէկ թաշկինակ փռած, վրան կ'նստին, կ'հանգչին քիչ մը, ոտքերնին կախած ծովին ու վիհին վերեւը և մէկմէկ սիկարա պլլելով կ'մխացնեն։ Ուրիշներ ուշադրութեան արաբայ կ'դառնան, իրենց սպառած բըրընձախոչիի ու կրաներկի առատ քանակութեան համեմատ, որ խանդրած ու քրանած մորթի մը վրայ մալակնուած, այլանդակ խաւիծ մը կ'կազմէ ու ներկուած մաղերուն, յօնքերու բատրըխին հետ խիստ հակադրութիւնով մը կ'յայտնուի ու կ'չեչտուի։ Շատերը տարիքնին առած են և այդ՝ կրկնապէս ծաղրելի կը դարձնէ զիրենք։ Ներանաս տղաք ու երիտասարդուհիներ նմանակութենէ քամիծաղներ կ'փոխանակեն իրարու հետ, ամենքը մասնակցելով։ Կան նմանապէս ուրիշ տարբեր կիներ՝ որոնք ձերմկնալու ու աղտոտնալու փափաքին չափ ալ և' աւելի, երիտասարդանալու մարմաջէն բռնուած են։ Ծաղկազարդ, լայնափեշուր գըլխարկներ, անոնց ինչպէս կիսախարխինները միայն կ'դնեն Եւրոպայի մէջ, կուսական բացգոյն արդուզարդեր, ադամանդ, տէքօլթէ, ժանեակ, գանգուր։ կատարեալ քարիքաքիւբ։

Կ'անցնինք։ Գեղացի կամ տեղացի Օշոն ընտանիքներ, աղքատ մեծ մասով, որոնք ասանկ բանաերիներու առիթով, հազիւ ամբողջ ամառուան մէջ երկու անգամ երեւան կ'ելլան, իրենց ամանոց ու երիներանց ապահոյէ չրջաղեւսներով, իրենց թեւերուն մէջ ու փէչերուն չորը լցնող լաճերու ու կզուրող բզէզներու առաւտեթիւնով ու իրենց սրնգաձոյն խլացուցիչ չառախօսութիւնով տարօրինակ ու նոր նօթ մը կ'ավելցնեն, արդէն իսկ կերպարանափոխուած մեր տվորաբար հանդարտիկ արտեւտին դիմագծութեան վրայ։ Իրենց քիչ չատ հասուկ ու գեղանի աղբիւրները թուքերնին կ'կլլեն։ պառաս villégiaturistesներու պոռտ ու թանկարժէք արդուզարդերը դնելով։

Հեռուէն լանթէրնա մը կ'երթի, դինով ձկնորսներու փունջ մը կապած ետին, որոնք ալ այլանդակ բացագանչութիւններով ու յեղակարծ ոստումներով կ'ընկերանան խոպոտ եղանակի մը հետ ի հեւ քաշքշուքներուն։ Վարէն, նաւակներու, մակոյկներու, կօնսերներու բազմութիւն մը իրար կ'դիմաւորէ, երթուդարձի գիծին վրայ, տղայական երգերու, նաւավարներու կանչերուն, իթիներուն ճղփիւնիներուն մէջ։ Հոն ալ գինովներու խմբակ մը լանթէրնա մը ունի նաւակի մը մէջ, ուր նոյն իսկ մարդոն մէկը, իր հաւասարակիցներու հետ վրայ հազիւ վստակ, ելեր որոնք վանահաղի վէտվետումներ ու ցայտուքներ կ'ձեւացնէ, ընդհանուր քամքաններու մէջ։

Հիմա վերադարձողները, թէ' ծովին, թէ' ցամաքին վրայ մեծ հանմատութիւններ կ'առնեն և անագին մեծամասնութիւն կ'կազմեն քաղքատարար նոր գացողներուն՝ որոնք, ա'լ ասկէ վերջը հոն կենալու միտքով չէ որ կ'երթան։ Դիմացէն խուժող մարդկային հոծ այդ ալիքներուն դիմադրելով, մեծ դժուարութիւն կ'քաշենք ճամբայ բանալու ու առաջնորդուելու համար։ Բանաւորի ժողովուրդ մը, ծանազգեստուած կիներ, խայտաճամուկ սալթաներ, գենուներէն փրթած հագիւ երեսին թեթեւ ալեակներ փոթփոթած գիծերով կուգան փրփուրէ փիսրուն չղչանակ մը յօրինել լոյծ տարրին երիներանգ ու անայլայլ հայելիին չուրջը։

Դէմերնիս, Ուչա—Տէէի բլուրը կը բարձրանայ, ճակատին վրայ բերած իր կանանչ բերդէմը, մէկ թեւին տակ հովանաւորիով Անատոլու Ռավաքի նաւահանգիստը ու գեղեցիկ գեղը, միւս թեւին տակ իր քարտանքերով ու մացառուտներով պարհնաւորելով ու արծարծելով Ումուր—եէրլի կիրի մշաբորդը հնոցները, որոնցմէ գիշեր ցերեկ չարունակ, դեղնորակ թաւ մուխ մը կ'ըվխի ու կ'մլուի առաջ, տրտանան ու յաւերենական ծխամորճներու պէս։ Ատուբնէ մինչեւ իրիկուն, վաճառքի հարիւրաւոր լեռնակերպ չեզնաուներ, անմռունչ հականերու պէս կուգան կ'անցնին եռեւ եռեւ, իրենց յատակի լայն կարմիր երիզովը, արգուկի պէս, խիստ բայց խուսափուկ գիծ մը քաշելով ծովին երեսին վրայ ու եռեւնուն ձերմակ փրփուրէ լայն գարգ մանակներ պարզելով։ Ուրիշներ՝ որոնք անատօրապէս բեռնաւորուած կ'վերադառնան Սեւ Ծովէն, նմանապէս կ'թափային առաւօտեան մինչեւ իրիկուն, երկու մատ միայն բարձր մնացած ծրերին երեսէն, առանց մուխի, առանց փրփուր ժայթքելու իրենց եռեւէն, ծովին խորութիւններուն մէջ թաղուած, ինչնչարժ կարծես, ծածուկ հոսանքներու վրայէն արագօրէն սահելով։

Բայց ինչ որ անթաղդատելի է, անզուգական է, չքեղաչուք է, Սեւ ծովի լայնաբաց բերանն է իր հոյակապ ծովափներով, իր հեռաւոր տուներով ու խորհրդաւոր վէմվէմուտիւններով, որոնցմէ միւս, չատ մեծ մասը չնչաւորութիւն մը կ'ժայթքի։ Իր անհուն միօրինակութեանը մէջ մանրամասն պէսպիսութիւնով մը օծուած, իր անծայրածիր բանաստեղծականութեանը մէջ հրապուրիչ ու անմատչելի, իր բանաչունչ փոթորիկներուն մէջ խոժոռ, մռայլ ու ահեղի, կ'տարածուի, կ'սաւառնի, կ'երգէ, կ'գոռայ կ'գոռգոռայ։ Ամբողջ ամառը, օրերով, ամիսներով, նոյն իսկ օրը քանի մը անգամներ, արեւին ու ամպերուն գանազան երեւոյթներուն ու խաղերուն տակ, կ'երթանք գիտել զայն ու չենք կրնանար ըմբռնմնելով անոր անասելի ազդուրութիւնը, ամէն անգամուն ջնջին բայց միշտ գրաւիչ նորութիւն մը գտնալով անոր վրայ և ամէն անգամուն, մանաւանդ օսթակէզ օրերը, անոր պաղ չունչին տակ, ունենալով չզգենաւի մը հնոցպանին ապահովութիւնը որ կրակին առջեէն փախչելով, պահ մը վերնայարկ կ'ելլայ կիսամերկ, ինքզինքը հիւսիսային հովուն տալու համար։

Ժողովուրդը հոծ կարգերով միտ կը հոսի նեղ արահետին վրայէն. գինովիները միտ կ'երգեն, վաճառորդները միտ կը մտտան։ Հոս կարգ մը նորատի խապատուիներ, չես գիտեր ի'նչ չնչին պատճառով մը կ'սկսին ծեծկռտիլ։ Հոն՝ կնկան մը վրայ մարելիք կուգայ։ Անդին գինով մը կ'գոռի գետինը ու չի կրնար վերականգնիլ հակառակ իր բուռն ճիգերուն, ընդհակառակը աւելի անդունդները կ'թաւալի և կ'կախուի անդունդին վրայ, անգիտակից, չարժելու անկարող, մայտաներուն կառուցած։ կիներ՝ ահռելի ճիչեր կ'արձակեն։ Բարեկարգութեան հսկող պաշտօնեաներ, իրենց կարգնեղ բազուկներով կուգան վերադրկեր զայն ու առնել տանիլ։ Հեռուէն ցըլպըրիքի մը ձախուտքը կ'լսուի։

Դիւերը Ռավաքի առջեւ խարսխած բարկամ ձկնորսանաւի մը մէջ կ'ճաշենք ուր մանաւուրապէս պատրաստուած համեստ բայց համեղ ալամանա չօրպան մը քար կ'դանէ Մարթիլեան մեծահամբաւ պուլեապէնեներուն, որոնց յիշատակը տակաւին թարմ կ'մնայ միտքիս մէջ։ Ժամը երկուքին կ'վերադառնանք միւնեոյն խաքի ժապաւէնին վրայէն, որ հիմա մութ ու ամայի կ'կորսուի կամնկներուն տոհմ։ կամաց կամաց կ'քալենք, խօսակցելով ցած ձայնով։ Շատ չանցած տորէն առջի իրիկուան դարեւանդին վրայ կ'բարձրանանք, սպասելով լուսինին որ հիմա պիտի պտռիկայ, հեռուն կուսակուած ցած ու սեւ ամպերուն եռեւէն։ Հարիւրաւոր ամաթէօրի ու արհեստաւորի ձկնորսանաւեր, մակոյկներ, քով քովի կեցած համտամբ, իրենք ալ կ'սպասեն լուսինին ելլալուն, որ սանոն, ձուկերուն աչքերը չլամալով, կ'դիւրանայ իրենց գործը։ կ'երգեն, կ'խնդան, կ'խօսակցին։ Մութին մէջ, սիկարի բաշմաթիւ ծայրեր, կայծերու պէս կ'փայլփլին ու կարծես իրարու կը ծպտին։ Վաճառքի յետաւիաց ու գիւղերաշրջիկ, անագին չոգենաւ մը, միջուխեան մէկէն կ'առաջանայ համ ու չամրաքայլ, չորս դին ու կայմերուն վրայ կարմիր կանչ լապտերներու չարժէն միայն գուչակուելով իր հեզասահ անցքը ու ընթացքը։ Հեռաւոր ամպերէն փայլակի գիսզամկեր կ'ճայթին ու կ'սողան ջուրերուն երեսը։ Շիրքէթիի չոգենաւներուն ու պահականաւերուն իրար խաչաձեւող ու խուզարկու լուսարձակները, երկինքի չողիւններուն արձագանգը կ'թափին ըլլալ երկիրի վրայ, անանկ որ վերէն ու վարէն լուսեղէն անվերջ ու անհուն գիսաւորներու օրսկումներ կ'սողոսկին, ա'լ աւելի չեչտելով խաւարը ու չլացնելով մեր աչքերը։ Երբեք չեմ յիշեր այսչափ լոյսի տեղ մը ու խորհրդաւոր պահ մը, այսքան լայծորէն վայելած ըլլալ։

Մարթիլէն մէկ գեղերով բազմաթիւ գոյգեր, կ'երեւան ու կ'անհետանան միշտ ըլլալաքի կողմերէն եկող ու գացող։ Անբոլորին մրմունջներ կ'լսուին մացառներուն մէջէն։ Ամէն խոյր, ծրմըռուած իր խորհրդաւոր պատմութիւնն ունի։ Միրային անլուր ու անորակելի տալվերա մը կ'տլորքի այդ պահուն չբլակայ բլուրներուն առաւերան ծաղքերուն մէջ։ Պարկեչտ ֆըլիրթէն մինչեւ ամէնէն ապերասան անապահութիւն թափ կ'առնեն, այդ համբաւաւոր արաւետին չորս բոլորը, ուրկէ հիմա պիտի գայ հալածել զիրենք, լուսինին խուզարկու ու կորովարիր նայուածքը։

Ու իրաւ ալ, մռայլ ու կուռ ամպերուն վրայէն չարտաւանցող կնայրջանաւ կամեր աղօտ փուչփչանքի մը մէջ դուրս կուգայ երեսան կուգայ իր լուսավառ ու ղուարթ գլուխը, դէրասանի մը պէս, որ երկար սպասումներէ ետքը յանկարծ բեմ կ'նետուի չնորհալի ժպիտ մը քթթելով ծափողջունող հանդիսականներուն հասցէին։ Փայլակներուն ու լուսարձակներուն չղխնները, ամօթանար ու ուժասպառ զակոթիւններ կ'ունենան անոր ծաղրական ծիծաղին տակ և ծովը իր մերկ ու ու հեշտական լանջին վրայ պաղացնելով անոր վարսերէն վար հոսող արծաթի անձրեւները, գոհունակութեան չնորհակալութեան ու փառաբանանքի ստաչարժ հրաժչտութիւն մը կ'յայտնեցնէ իր ժպտուն չողջոյններուն, —Վախարի համափիւռ ու գալարուն ափերուն վրայ

ԶԻՓԻՒ—ՍԱՐԱՖ.

ԱՆՏԱՌՆԵՐՈՒ ՇՈՒՐՋԸ

Զքնաղ Թուրքիոյ առատօրէն չնորհուած քնական հարստութեանց էն կարեւորներէն մին՝ իր բազմաթիւ անտառներն են, որք ընդարձակութեան և գեղեցկութեան կողմէ կ'գերազանցեն իր նմանները։ «Բնական Պարտէզ» կոչուելու արժանի այս վայրերուն ունեցած արժէքն ու կարեւորութիւնը մի առ մի թուելու համար՝ մէկէ աւելի էջերու պէտք է. օդը կ'մաքրէ, մեր քնակարանները չինութեան և կարասիներու պատրաստութեան համար անհրաժեշտ եղող առատը կ'հայթայթէ, վառելափայտ և ածուխ կ'արտադրէ, հետեւաբար չկայ աշխարհիս մէջ անհատ մը որ ուղղակի կամ անուղղակի կերպով անտառներու այս այլազան բարիքներէն օգտուած չըլլայ։

Մեր նպատակը չէ հոս նկարագրել անոր թանձրաթուխ ծառերուն ստուերներուն տակ աճող ուռճացող հազարումէկ խոտերը, բոյսերը, գունագեղ ոճով գրել կոյս անտառներու հմայքն ուր գետ մարդու մը ոտքը չէ կոխած և ոչ ալ փայտահարին կացինը կամ տապարը պղծած է զայն, ոչ ալ ագնան հովերու տերեւները խարշախիլնը կամ զեփիւռին մրմիջը ողբն երգել։ այլ՝ ճարտարարուեստին ընձեռած օգտակարները պարզել պիտի կանանք. այս առիթիս չմոռնանք յիշել թէ օրտորդներու սիրական զբօսատեղին է անտառն որ Բիւնեթեան պերտաղ բանաստեղծներէն չատերու տո'ւն տուած է։

Թուրքիոյ անտառները չուրջ 12 միլիոն հեքտար տեղ կ'գրաւեն։ Անտառներու արգիւնքը չատ ըլլալով, գլխաւորաբար Արքունի Ծերդանօճարանի, Նաւարանի, ինչպէս և կառագործութեան, տաղաձագործութեան, տուփի, կառքի, սայլի, ճախարակի, թէռնիչի, տակառի չնչուածեանց ու երկրագործական գործիքներու առաղձ կ'հայթայթեն։ ճարտարագործութեան մէջ գործածուած խոզկաղինն ու խէժերն ալ անտառներէ կ'տացուին։ կաղնիին առատը Բումելիի և Անատոլուի բոլոր անտառներէն կ'ելլէ, սակայն ամէնէն ընտիրը Սինոպի չրջակայքը կ'գտնուի։ իսկ էլօվոթի առատն ևւր. Թուրքիոյ ինքզինքն գաւառի Օզվա և Բարմալի լեռները, Ա. Թուրքիոյ Քէչիր, Աբաս, Ալա, Իլգար, Թաւան, Զաղըպէլ, Դմբէք և Զալ լեռները կ'գծուին։ Ասոնց առատն է որ նուագարաններու համար կ'գործածուի։ Շինութեան համար ամէնէն ընտիր առատը կաղնին, էլօվոթին ու չգագանակենիները է։ Կնձնին (գարս ագաճ) ու լաստենին (գըզըլ ագաճ) չուրի մէջ չատ դիմանալնուն համար խանութի, հոսի, հանքի ա. Սբքաւոր Թաղանօթարուեստի ու նաւարանի չինութեանց համար կ'գործածուի։ կաղաքան, կեռասենին, հացին, փեհկոզը (ագկըբէկ կամ քայէն) պեհլիան (ագչէ), սօսին, բարտին, տանձենին, յուլաղը, ձիթենին և ալճաչին կահագործի ու առատագործի բոլոր շինուածքներուն մէջ կը գործածուի, փիկոնի, ագաստային, կնձնիի, ուղղարին, հացիի, բալենի ու ծառատի կառքի ու սայլի, ուղղարին, չագանակենին ու ցարասին տակառներու, տուփի և ճախարակի պատրաստութեան նուի կ'հայթայթեն։ Վառելագործարի համար կաղնին, ուղղարենին և փեհկոզը։ Ցարասին ու ուղղարին չատ բանկալ-

ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹՕՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի

ՀՆԳՈՒԻՑ ՍԻՆԳԻՒՆԻՒՋ (66)

Բուլանիեաքի Ընտանիքը

ԵՐԲՈՐԴ ՄԱՍ.—Թ

—Զգիտեմ թէ ի'նչ գրած է ձեզ Օսնովաքին, սկսաւ Բուլանիեաք, բայց կըրնամ ձեզ հաստատել թէ այդ նամակը ճշմարտութիւնը միայն կ'պարունակէ...։ Ջալալեթինն ունեցէք համոզուելու թէ ինչ որ պատահած է ա'լ անքաւելի է։ Դուք աւելի կ'արժէք այդ աղջկան՝ ձեզ ընծայելիք վայելքէն։ Դիտեմ թէ... մեծ զժբախտութիւն մ'է այս։ Ձեր եղբայրն իսկ այնքան չպիտի կարենցէր ձեր տապալանքներուն որքան ես կ'կարեկցիմ... բայց պէ'տք է համակերպիլ։ Սիրելի Ինաս, խոհական եղիր։ Փախան անոնք, սատանան միայն գիտէ թէ ո'ր։ Օսմովլօքենք ալ կ'բացակային։ Ա'լ մեկը չպիտի գանէք Բրիմուվի մէջ։ Աստուած ձեզ մեծ ճակատագիրներ կ'վերապահէ։ Դուք երկրին աղն էք, բայսարիկ պարտականութիւններ ունիք... թէ' ձեր անձին և թէ ընկերութեան համբերէք։ Ձենէ չեմ պահանջեր որ մեկին մոռնաք ամէն ինչ որ սիրեցիք... բայց թոյլ չէ որուած ձեզի որ յուսահատութեան մատնուիք, իմ սիրելի խեղճ բարեկամս։

Բուլանիեաքի այսպէս խօսեցաւ երկարատեն... Համոզուով կ'խօսէր, ինք ալ յուզուած։ Իմաստուն և բարի խօսքեր կ'ընէր։ կ'ըսէր թէ զժբախտութիւնն սա մանաւոր բանն ունէր որ կ'տարածաձեր ու իր տեղը կ'մնար, մինչ մարդը միշտ յառաջ կ'մղուէր, ուղէր թէ չուզեր... ուստի և կ'հեռանար զժբախտութենէն։ Յաւն, իրաւ, ճախարակի գերձանի մը պէս կ'երկնար, բայց հեռազեռէ աւելի նուրբ, աւելի փափուկ, մինչեւ որ փըրթի... որովհետեւ մարդ, իրաց զօրութեամբը, վաղորդայնով կ'սպրի միայն։ Այս ամէնը կրնար ճշմարիտ ըլլալ. բայց, բանաստեղծին համար, աւելի անգութ, աւելի չօշափելի ճշմարտութիւն մը կ'ծագէր Օսմովօքիի նամակէն...։ Այդ իրողութենէն դուրս, անիմաստ նախադասութիւններ ականջին թմբուկին կ'զարնէին, բայց այնքան անբացատրելի իրեն համար, այնքան զուրկ ճշմարտանմանութենէ որ հեղձ արթածին ականջին այնպէս կը հնչէին ինչպէս կամուրջին երկաթէ ձողերն որոց վրայէն կ'թաւալէր հիմակ իրենց կառքը։ Ջավիլովօքի դեռ միայն չփոթած կը կրնար զգալ ու մտածել։ Սա տպաւորութիւնն ունէր որ ինչ որ պատահած էր իրեն անկարելի էր... և սակայն ճըշմարիտ, թէ ինք չէր ընդուներ այդ դժբախտութիւնը, թէ չպիտի կրնար երբեք ընդունիլ զայն — և թէ իր ըմբռնողութիւնն անօգուտ ու անկարող բան մ'էր միայն...։ Այս տպաւորութենէն դուրս, բոլոր ինչ որ կ'սնար քառս մը կ'թուէր իրեն։ Չէր կրնար նայ նոյն իսկ մարքին մէջ պատկերացնել ինչ որ կ'կորնցնէր Լիւնթէն զատ, ոչ իր ցաւերը, ո'չ սրտին ահաւոր պաթապութիւնը, ո'չ ալ քայքայուին այն հիմերուն որոց վրայ կ'հաստատուէր կեանքը։ Միայն մէկ իրողութիւն կ'տեսնէր։ Ալ Լիւնթէ գոյութիւն չունէր իրեն համար, զինքը չէր սիրեր, զինքը լքած էր ու Ռոքովօքին հետ մեկտեղ։ Այս ամէնը պատահած էր ու ինքը մտքին կ'վանէր իրողութիւնն իբր անճշմարտանման, անկարելի, ահռելի բան մը։ Եւ սակայն ճշմարիտ էր։ Եւ Բուլանիեաքի կ'չարունակէր զինքը մխիթարել։

—Իտալիա գացէք Սվիրօքինի հետ...։ Տառապեցէք, լացէք...։ Ուրիշ կերպ չպիտի կրնար ըլլալ...։ Բայց ալ չարարքը լայն է...։ Տիսնելու և սիրելու այնքան գեղեցիկ բաներ կ'պարունակէ։ Ամէն բան բաց է ձեր առջեւ... ուրիշ ամէն անձէ աւելի՛ ձեզ համար...։ Դուք ալ չարարքին չատ բան կ'պարտիք, որովհետեւ մեծ յոյսեր դրած է ձեր վրայ...։ բայց աչխարհն ալ փոխադարձաբար չատ բան կը պարտի ձեզի...։ Դայեք չորս կողմ պըտըտուեցէք, սիրելիս, կեանքը ձեր չուրջն է, կեանքն ամենուրեք է։ Նոր տպաւորութիւններ ձեր սիրտը պիտի յագեցնեն, ձեր մտածումները պիտի գրաւեն ու պիտի հանդարտեցնեն ձեր ցաւը։ Ոչ... պէտք չէ մինակ յիշատակի մը կապուիլ։ Սվիրօքովի մեղի ցոյց պիտի տայ Իտալիան...։ Պիտի տեսնէք թէ ինչ հիանալի «վեցայց պիտի ըլլայ անիկա ձեզ համար, ինչ նոր հորիզոններ պիտի պարզէ ձեզի։ Եւ յետոյ, գիտէք թէ ձեզ նման մարդ մը պէտք է յոյժ առաքինի ըլլայ։ Մտիկ ըրէք ինծի, ճշմարիտ ու անկեղծ բարեկամի մը խրատին հետեւեցէք...։ Շո'ւտ մենկնեցէք։ Յաստացէք ինձ որ պիտի մեկնիք...։ Թերեւս պիտի գանք տեղ մը միանալ ձեզի, Հռոմի, Նեապոլիի կամ Վենետիկի մէջ, յառաջիկայ գարնան...։ Պիտի տեսնէք թէ ինչպես կրնանք դեռ երջանիկ զգալ ինքզինքնիս։ Բարեկամս, կ'ուզէ՞ք ինձ խոստանալ ասկէ։ Աղէկ չէ՞ ինչ որ կ'ըսեմ։

—Աղէ՛կ, կրկնեց Ջավիլովօքի։ Միայն այս վերջին խօսքը լսած էր ու չէր գիտեր թէ ինչերին ի'նչ բանի վրայ էր։

—Օրհնեալ ըլլայ Աստուած, գոչեց Բուլանիեաքի։ Վերադառնանք հիմա՝ միաժին պիտի անցընենք իրիկունը։

Արեւը կ'խոնարհէր։ Ամառնավերջի հիանալի օր մ'էր։ Քաղաքին վերեւ կը բարձրանար ոսկի նուրբ փոշի մը։ տասնիքները, բայց մանաւանդ աղտարաներն ու եկեղեցիներուն գանգակատուները ըստ ուղղութ ցոլքեր ունէին ու իրենց չրջագծերը կ'գծէին երկինքին թափանցկտութեան մէջ։ Երկուքն ալ մէկ քանի վայրկեան լռութիւն պահեցին։

—Ո՞ր կ'նախընտրէք որ ձեզի առաջնորդեմ, հարցուց Բուլանիեաքի, իմ տունս կամ թէ ուղղակի ձ'ր տունը։

Քաղաքին աղմուկն ու չարժումը բանատեղը սթափեցուցին։ Աչքերը վեր ըրաւ ու չատ հանդարտ ձայնով մը պատասխանեց։

—Երէկուընէ ի վեր տուն չգացի, ոչ ալ պատրաստուեցայ հակել հօրս վըրայ։ Թերեւս մէկ քանի նամակ գանեմ հոն։ Տունս երթանք։

—Մտիկ ըրէք, բարեկամս, ըսաւ Բուլանիեաքի, երբ տուն հասան։ Ինչ որ պատահեցաւ, ա'լ երջանկութեան կամ դժբախտութեան խնդիր մը չէ միայն ձեզի համար, այլ անձնական արժանապատուութեան խնդիր մը...։ Տառապեցէք, բայց ոանկոնց ըրէք ձեր ցաւը, գոնէ ցոյց տուէք իրեն թէ դուք այնքան հոգ չէք ըներ զինքը։ Սվիրօքի այս իրիկուն մեզի պիտի գայ...։ Դուք ալ եկէք։ Մէկ քանի ժամ պիտի խօսակցինք, և դուք պիտի կարգադրէք ձեր ճամբորդութիւնը։

—Ո'չ, պատասխանեց Ջավիլովօքի. պէտք է որ դեռ հակիմ հօրս վրայ այս գիչեր։ Վաղն առտու պիտի գամ միանալ ձեզի, ու պիտի տեսնեմ Սվիրօքին։

Բայց ասիկա խօսքի դարձուածք մ'էր միայն։ Կ'ուզէր մինակ մնալ։ Բուլանիեաքի հասաց սակայն խօսքին. ասկէ գատ ինք մտածէր թէ հիւանդի մը չդայլելիք խնամքները մտասոյզ կ'ընէին բանատեղծը,

ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՅ

նուն համար փուռերը լաւ տաքցնելու առթիւ հացագործներու քով շատ յարգի են։

Վառելափայտի սպառման կեդրոն տեղեր փոխադրելու կրկնակի դժուարութիւններէն ազատ ըլլալու համար՝ փայտի հայթայթիչները մօտակայ գետի մը մէջ կը լեցնեն որ քշելով տրոհեալ տեղը կ՚առնի, ապա գործաւորներ զայն սայլերու մէջ բեռցնելով քաղաք կ՚առնեն, Ագչէհիր, Էրէյլի, Կիրասոն, Թիրէպոլի գաւառակներէն՝ Սեւ ծով հոսող Էվա կամ Էզվա, Սաքարիա, Դարասու, Մէլէն, Էֆթօն Աղզը, Աքզայա, Գոճամամ և այլ գետերու մէջ սկսած են այս դրութիւնը գործադրել։ Ցիշեալ գետերու միջոցաւ անագին քանակութեամբ փայտ իջեցնելով Սեւ ծովու եզրերը՝ անկէց ծովու ճամբով Պոլիս կ՚ղրկուի. Սվազի մէջ, Քէօսէ և այլ լերանց անտառներէն Դըզըլ Ըրմագի միջոցաւ Սվազ, Թոզաքլու միջոցաւ՝ Թօքաթ և Նէյլուֆէրի միջոցաւ ալ Պրուսայի մէջ Աճէմլէր ըսուած տեղը փայտ կ՚բերուի։ Իսկ Մարիցա գետի միջոցաւ՝ Բալքանի լեռներէն՝ Էտիրնէ, Դոմալայի մէջ՝ Մէթրովիչէէն հոսող Իպրէ գետին միջոցաւ Մէթրովիչէի երկաթուղւոյ կայարանը մեծաքանակ առատ կ՚ղրկուի։

Ատանայէն ու Սիսէն հոսող Սէհան եւ Ճիհան գետերը՝ Սէլէֆկէ, իսկ Այտըն ու Պօզթագան գասապաներէն հոսող՝ Կէօք Ըրմաք, Պէօյիւք Մէնդրէս գետերով ալ՝ Ատանա, Սիս, Սելեկիա փայտ ու ատաղձ կ՚փոխադրուի։ Առատ ածուխ կը պատրաստուի Սթրանճայի, Քէշէնտրէի, Այնորօզի, Լամզագէի ու Իզմիտի կողմերը։ Սթրանճայի լեռներէն՝ Միտիայի ու Սիլիվրիի նաւահանգիստներէն՝ առագաստանաւով Պոլիս կ՚բերուի, իսկ Թիւրպէտէրէէն երկաթուղիով. բէմօֆի ընտիր ածուխն Այնորոզէն, Քէշէնտիրէէն ու Լէնգազայէն կուգայ։

Կուպրն ու ձիւթը՝ Պրուսա, Դարասի, Դասմէժմոնի, Գոսովա, Տրապիզոն նահանգներու եղեւինի անտառներուն մէջ կ՚պատրաստեն։ Կէօրէլէէն, Պարթընէն ու Ինէպօլըէն Պոլիս՝ տիկերով կ՚բերեն։ Նաւաշինութեան մէջ գործածուած կեռասը՝ կաղնիէ ու չագանակենիէ է. իսկ չուանագործութեան մէջ՝ Թմբիինը. ուռենիին նոր ճիւղերէն՝ տակառի շրջանակ և կողովի հիւսկեններ կ՚պատրաստուին։ Ծարասիի նոր ճիւղերէն աւելի, եղեւինէն բէնզին, կուպր ու թիրէմէնթին կ՚հանեն, որ Արքունի նաւարանին, գեղագործութեան և այլ արհեստներու մէջ շատ կ՚գործածուին։ Եղեւիններու և քէօքնարներու ստուերը գեղագործութեան մէջ կ՚պարուի. այս անտառներու ծառերէն արտաքսուած հոտը՝ կուրծքի հիւանդութեանց համար շատ օգտակար նկատուած է։ Ասոր համար է որ Թօքայի և կուրծքի զանազան հիւանդութեանց ենթակայ եղողներուն՝ բժիշկներու կողմէ Մեծ—Կըզլի երթալ կ՚յանձնարարուի։ Թոմպիի ծաղիկն արդէն շատ ծանօթ է իբրև քրանեցուցիչ։

Ազգիքէնի ածուխը դծագրութեան մէջ յարգի է։ Փեկոնի պտուղէն ու եղևնիի պիստակէն իւղ մը կ՚ելնէ որ ձէթին հետ խառնելով կ՚խարդախեն։ Ատաղձի մը Թերափայտն եթէ բարակ ըլլայ՝ շուտ կ՚այրի ու քիչ տաքութիւն կուտայ, օդի ազդեցութեամբն աւրուելով մասնի նման վնասակար ու նեղացուցիչ միջատներու բնավայր կ՚դառնայ. Ներկի տախտակներու Թերափայտին գունաւոր նիւթերը քիչ կ՚ըլլան, հետեւաբար էն քիչ Թերափայտ ունեցողն էն յարգին է։

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍԱՅԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

ԻՆՉ Կ՚ԱՆՑՆԻ Կ՚ԴԱՌՆԱՅ ԾՈՎԻ ՈՒ ՑԱՄԱՔԻ ՎՐԱՅ

ԴԷՊՔԵՐՈՒՆ ԱՐՁԱԳԱՆԳՆ Ի ՌՈՒՍԻԱ

Շաբաթ իրիկունէ ի վեր նշանակելի նոր դէպք չկայ՝ Բեդերսպուրկի ֆրանսական դեսպան Մ. Մորիս Պոնբառ անցեալ օր Բարիզ եկաւ Մ. Տէլքասէի հետ անձամբ տեսնուելու, և զինք այցելողներուն կ՚ըսէ՝ հրատարակուելու ակնկալութեամբ անշուշտ՝ թէ Ռուսիա «աւելի քան երբեք» միտքը դրած է «կարևորն ի գործ դնել» վճռական յաղթութիւն մը ձեռք բերելու համար։ Զօրք, ձի, զէնք, ռազմամթերք և ուտեստ ամէն օր կ՚ղրկուին երկաթուղիով, և Զօր. Քուրոբադքին այժմ ունի գերազանց ոյժ մը իր հրամանին տակ։ Ֆրանսացի դիւանագէտը վստահ է որ ռուս սպարապետը պիտի գիտնայ օգուտ քաղել այս յոյժ բարւոք կացութենէն։ Եւ որովհետև Ֆրանսացիք կ՚ուզեն ցոյց տալ թէ նաև գործի մարդիկ են, Մ. Պոնբառ կ՚հերքէ այն կարծիքը թէ Ռուսիա պատերազմի պէտքերու համար աւելի Գերմանիոյ քան Ֆրանսայի ապրանք կուտայ եղեր։ Նիքօլա Բ.ի կառավարութիւնը վստահեցուցեր է թէ ապսպրանքներուն մեծագոյն մասը Ֆրանսայի պիտի տրուի։ Թէև Մ. Պոնբառ այսպէս կ՚յայտարարէ, բայց գերման լրագիրք կէս—պաշտօնապէս ծանուցին թէ Ռուսիոյ նոր փոխառութեան առաջին մասն Ցանուար ամսուն ի հրապարակ պիտի հանուի Գերմանիոյ մէջ, և երկրորդ մասն աւելի ուշ քերն ի Ֆրանսա հրապարակ պիտի հանուի, և թէ գերման սեղանաւորութիւնը պայման դրած է Ռուսիոյ հետ որ Գերմանիոյ մէջ ստորագրուած մասը դուրս չպիտի քաշուի, այլ ամբողջովին Գերմանիոյ մէջ պիտի ծախսուի։

Թէ Ռուսիա յաղթելու միտք ունի, այս մասին տարակոյս չկայ։ Միակ խնդիրն յաղթելու միջոցներուն վրայ է, և այս նկատմամբ տարբեր հոսանքներ կան ի Բեդերսպուրկ։ Ռուս մամուլը մեծ յոյս կը կ՚դնէր Բիլէէն ու Արժանդինէն գնուելիք մարտանաւերուն վրայ։ Այս օրերս որոշ հրատարակուեցաւ Բեդերսպուրկի և Լոնտոնի մէջ թէ Ռուսիոյ առաջարկները չեն ընդունուած ամերիկեան այս երկու կառավարութեանց կողմէ, որք կ՚զգուշանան չէզոքութեան այնքան հակառակ ընթացք մը։ Ռուսիոյ ծովային նախարարութիւնը վշտացաւ Նօվօյէ Վրէմիայի մէջ Պլատօ նաւապետին յայտնութիւններէն, և իբրև զրպարտիչ քննադատութեան ենթարկեց զայն։ Բայց հանրային կարծիքն որոշապէս Պլատոյի կողմ բռնեց, և ինք նաւապետը պահանջեց դատուիլ Զինուորական Ատենին առջև։ Ինչպէս ծանուցինք, մէկ—երկու օրուան մէջ հազարաւոր բուպլիներ ղրկուեցան Բեդերսպուրկի Թերթերուն՝ սուր մը նուիրելու Պլատոյի, իր անունով սաներ պահելու Նաւային Ակադեմիայի մէջ, և շարժուն հիւանդանոցներ կազմելու ռազմադաշտին վրայ։ Հազարի չափ անձինք ուզեցին իրեն այցելել։ Ռուս զարգացեալ դասուն համար գեղեցիկ առիթ մը եղաւ այս՝ հռչակելու թէ գոհ չէր պատերազմական գործողութեանց ընթացքէն, գործուած զեղծումներէն, կրուած ձախողութիւններէն, և ինչպէս յիշեցինք, Պլատօ նաւապետին ձայնակցող և անոր ի պատիւ դրամ ղրկողներուն մէջ առաջիններէն մին եղաւ նոյն ինքն ծովակալ Ռօժտեսդվէնսքիի կինը։ Վերջապէս, Պուլանժէութեան նման համակրական շարժում մը սկսաւ ծրագրուիլ Ռօժտեսդվէնսքի ծովակալին օգնականին շուրջ։ Պաշտօնարանը, չուզելով որ խօսքն երկարի, կարճ կապեց, և նորէն Պլատօ օրուան դիւցազնն է Ռուսիոյ մէջ, առանց յաղթութիւն մը շահած ըլլալու Ճարոնցիներուն վրայ, բայց գոնէ բարոյական յաղթութիւն մը շահած կ՚համարուի պաշտօնական թերութիւններու և ինչ ինչ զեղծ տարրերու դէմ։ Թէև քննարկեալ, Պլատօ յօդուած մը հրատարակեց Ռուսի մէջ, ծանուցանելով թէ երբ Օգոստոս ամսուն մեկնեցաւ Վլատիվոստոքէ, Քուրոբադքին եւ Սքրիդլով խնդրեցին իրմէ ըսել Բեդերսպուրկի մէջ թէ ո՛րչափ մարտանաւ կայ Պալթիկի մէջ՝ շուտով ճամբայ հանուի դէպի Ծ. Արեւելք։ Այս Թախանձագին կոչին պատասխանն եղաւ Ռօժտեսդվէնսքի ծովակալի տորմիղին առաքումը։ Բայց անիկա չի բաւեր, կ՚ըսէ նորէն Պլատօ, և կ՚պահանջէ շուտով պատրաստել երրորդ տորմիղ մը, և միևնոյն ատեն կ՚ցաւի որ 1905 Օգոստ. կամ Սեպտ. ամիսէն առաջ պատրաստ չի կրնար ըլլալ այս երրորդ տորմիղը։ Ուրիշ ելք չի մնար ուրեմն Ռօժտեսդվէնսքիի համար բայց եթէ ժամանակ շահիլ։ Ճարոնցիք ալ կ՚աշխատին թէ՝ իրենց նաւարաններուն մէջ, և թէ բաց ծովի վրայ։ Դէպ արեւմուտք գացող խորհրդաւոր նաւերու լուրեր կուգան Ծ. Արեւելքէն։ Բէլֆօ անգլ. լրագիրը լուր տուաւ թէ անցեալ կիրակի Բենանկի արեւելեան կողմը, 150 մղոն հեռի, տեսաւ մոխրագոյն ներկուած մարտանաւ մը չորս ծխնելոյզով, որ լոգեւորդ դէպ արևմուտք կ՚ուղղուէր, բայց դրօշը չէր ցուցներ որ ազգութիւնը չիմացուի։ Ի Բենանկ զեկուցուեցաւ ձկնորսանաւերուն որ իրենց կանթեղները աղէկ ցուցընեն գիշերները, Պալթիկի դէպքին կրկնութեան առիթ չտալու համար։

Պալթիկի նաւատորմին Բ. հատուածն որ Ճիպութի հասած է՝ մեկնեցաւ այն տեղէն, բայց ա՛լ այսուհետեւ շուտափոյթ լուր չենք կրնար ստանալ թէ ո՛ր կողմ կ՚երթան ռուս նաւերը, զի ասկէ ետքն իրենց ճարպիկութիւնը պիտի կայանայ իրենց շարժումներն ծածկելուն մէջ։ Ռօժտեսդվէնսքի Ա. հատուածով դարձաւ Բարէյոյսէն, բայց յայտնի չէ թէ Մատակասքարի՝ թէ Մօրիս կղզին առջև պիտի միանայ Բ. հատուածին հետ, և ամենքը մէկէն դէպ ի հարա՞ւ պիտի ուղղուին՝ Փիլիպպեանց կամ Աւստրալիոյ կողմը, թէ արեւմտեան հիւսիսային գիծը պիտի բռնեն։ Ասկէ ետքն իրենց ընտրելիք ճամբան պիտի ցուցընէ թէ ժամ առաջ Ծ. Արեւելք հասնի՛լ է իրենց նպատակը, թէ ո՛չ ժամանակ վաստկիլ։

Բարիզի Թերթերէն ոմանք այս օրերս դարձեալ գրեցին թէ քաղաքակիրթ աշխարհը պէտք է Ռուսիոյ համակրի, զի անիկա քաղաքակրթութեան դատին համար կ՚կռուի Ծ. Արեւելքի մէջ։ Անգլիացիք այս գաղափարէն չեն, բայց անոնց խօսքը չըլլար, որովհետև յայտնի է թէ անոնք հակառուս են ի վաղուց անտի, և հիմակ ալ Ճարոնի զինակիցն են։ Ամերիկացիներուն կարծիքն աւելի նկատելի է։ Ճարոնի կայսերական գերդաստանէն Փուշիմի իշխան, որ պատերազմի մէջ վիրաւորուելէն ետքը կէս մը քաղաքական պաշտօնով Մ. Նահանգները ղրկուեցաւ, այս օրերս Ջերմագին համակրանքի առարկայ եղաւ ամերիկեան լաւագոյն ընկերութեանց ներկայացուցիչներուն կողմէ։ Ամերիկեան Ասիական Ընկերութիւնը կոչունք մը տուաւ ի պատիւ իրեն, և սեղանին վրայ այս հեռագիրը ղրկուեցաւ Միքատոյին. «Ջերմագին խանդավառութեամբ մեր գաւաթները պարպեցինք Ճարոնի Վեհ. Կայսեր կենաց։ Համակրանօք ծափահարեցինք այն խորունկ համոզման արտայայտութիւնը թէ Կայսեր իմաստուն նկարագիրն ու ծանուցեալ կարողութիւնը նոյնքան նպաստաւոր պիտի ըլլան Ծ. Ասիոյ վերածնութեան որքան եղան իր սեփական երկրին փրկութեան ու բարուքման։» —Քանի մը ժամ ետք, Թօքիոյէն հասաւ շնորհակալութեան պատասխան մը։

ԱԿԱՆԱՏԵՍԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԱՀՌԵԼԻ ՏԵՍԱՐԱՆ ՄԸ

Զօր. Քուրօքիի բանակէն Սթանտըրտի Թղթակիցը ղրկեց մանրամասն պատմութիւնն Ենդայի կամ Շա—Հօի ճակատամարտին։ Ծանուցանելէ ետքը թէ Զօր. Քուրոբադքին, իր ձեռքին տակ հաւաքուած ոյժն ա՛լ բաւական համարելով, յարձակողականի սկսելու ժամն հասած հռչակեց Հոկտ.ի սկիզբը, և շեշտելէ ետքը թէ սպանուած ռուս սպաներուն վրայէն գտնուած Թուղթեր ապացուցած են թէ ռուս սպարապետին նպատակն էր Բորդ Արթուրի օգնութեան փութալ, Թղթակիցը կ՚նկարագրէ Ռուսաց յարձակողական շարժումը, նախ և առաջ Քուրօքի զօրավարը պաշարելու փորձը, եւն., ու կ՚ըսէ.—

«Հիմակ Օեամա Մարէշալին եկաւ կարգն յարձակողականի սկսելու։ Հոկտ. 10ին, յառաջխաղաց շարժման պատրաստութիւնք եղան, և երկրորդ բանակը (Նօծը) և արեւմտեան բանակը (Օքու) իրենց դիրքերը բռնեցին ածխահանքին ու երկաթուղիին միջև, ամբողջացնելով ճարոնական գիծը Պէնսիքուէն մինչև Ենդայ։ Հասկցայ որ գիշերը կարևոր դէպքեր պիտի պատահէին. զի Ճարոնցիք փորձով ապացուցին թէ գիշեր ատեն յարձակումը քիչ վնասով մեծ արդիւնք կարող է տալ։ Կէս գիշերն 3 ժամ անցած, հետեւակաց ստուար ոյժ մը հովիտէն անցաւ, և Մարտկոցի բլուր կոչուած բարձունքին դիմացի սարերը զարկաւ։ Ռուսերը ճարպիկ հնարքներ մտածեր էին յանկարծակիի չգալու համար։ Տեղ տեղ պղպջատեաց թելեր ու շղթաներ քաշեր էին ուժգին ելեկտրականութեամբ առլի։ Վերջին հնարքն էր ուղտի զանգակներու շարոց մը, որուն գիշերը զարնուելով թշնամին ակամայ կ՚հասկցնէր իր մօտենալը և գնդակներու տարափով մը կ՚ողջունուէր։ Այսու հանդերձ, Ճարոնցիք յաղթեցին, և լոյսը ճեղ բռնելուն, տեսանք որ ածխահանքին միւս կողմի բլուրները Ճարոնցիներուն ձեռքն էին, և Ռուսք ուժով բռնած էին Մարտկոցի Բլուրը, իր առջևի բլրակներով։ Ճարոնական հրետանի մը հրկիզեալ Զէն—Դօու չինական գիւղին մօտ կորեկի արտի մը մէջ պահուըտած էր. և կ՚աշխատէր լռեցնել բլուրը պաշտպանող ռուսական հրետանիները։ Նորէն դիտեցի որ ճարոնական թնդանօթները ռուսականներուն չափ հեռուն չեն զարներ և նոյնչափ ծանր ռումբ չունին։ Հետևակազօրքին կեանքը կախում ունէր թնդանօթի կրակէն, բայց ճարոնական թնդանօթը չէր յաջողեր բոլորովին լռեցնել թշնամին։ Բարեբախտաբար, Ռուսք իրենց լաւագոյն թնդանօթները գործածելու անկարող էին, և իրենց ռումբերը թէպէտ աւելի հեռուն կ՚իյնային, բայց նշանառութիւնը գէշ ըլլալով, վնաս չէին պատճառեր այնքան։

«Ռուսական բլուրը թնդանօթի կրակով դէպ աղէկ ծեծուելէն ետքը, իրիկուան կողմ տրուեցաւ յարձակման նշանը։ Ճարոնական հետեւակներուն մէկ մասը մաքառմներու նման խառոցներու մէջ կ՚սողոսկէր. ուրիշ մաս մը չինական գիւղին պարիսպներուն ետին էր, և ուրիշ մաս մը ծործի դիմացի բարձունքին վրայ տարտղնած էր։ Յանկարծ ամենուս աչքերն ուղղուեցան Մարտկոցի Բլուրին դէմի բլրակին վրայ։ Ճարոնական գումարտակ մը, գլուխը խոնարհած, իբր թէ մրրիկի դէմ քալէր, կ՚խոյանար դէպ ի սար մը, ուր երկու շարք խրամներ կային՝ ռուս զօրքով լեցուն։ Ճարոնցիք ճարտար շարժումով մը յանկարծ ետեւի կողմէն ինկան Ռուսաց վրայ, և գնդակի հարուածներով զանոնք վանեցին սարէն միւս կողմը։ Կռիւը կարճ, կտրուկ, և արիւնաշատ եղաւ։ Ճարոնցիք անհետ եղա՛ն պահ մը, և քիչ ետքը տեսայ որ Մարտկոցի Բլուրն ի վեր մագլցելու վրայ են։ Պահ մը խոր ճեղքուածքի մը մէջ պահուըտեցան շունչ առնելու համար։ Քանի մը վայրկեանէն նորէն դուրս եկան, ի սկզբան 12 հոգի, յետոյ վեց, յետոյ 2 հական, 3 հական, նմանն վազվզելով լեռն ի վեր։ Արագաշարժութիւնն երբեք աւելի անհրաժեշտ եղած չէր կեանքին պահպանման համար, և աշխարհի վրայ չկայ զօրք որ ճարոնականէն աւելի արագավազ ըլլայ։ Իրարմէ կը բաժնուէին, կ՚ցրուէին, ո՛ւն աջ, ո՛ւն ձախ կ՚երթար, բայց ամենքն ալ դէպ ի գագաթ կ՚դիմէին։ Գնտակները կ՚տեղային իրենց վրայ, կարկուտի նման։ Կ՚տեսնէի վազող Ճարոնցիներուն ոտքին տակ դեղին փոշիին ելնելը, մինչ չէֆ, չէֆ, չէֆ գնտակները կ՚խարազանէին օդն անտեսանելի մտրակներով։ Ճարոնցի մը կ՚իյնար, անոր ուրիշ մը, և ուրիշներ ալ։ Արդեօք պիտի կրնայի՞ն լերան գագաթն հասնիլ։ Շնչասպառ հետաքրքրութեամբ կ՚հետեւէինք։ Հիմա դէպ ի ձախ դարձան, գետին փռուեցան շունչ առնելու համար, գնտակներու տարափն իրենց գլխուն վրայէն կ՚անցնի կ՚երթայ, բայց ոտք ելնելնուն պէս պիտի զարնուին։ Բայց ոտք ելան, և աւելի տարածուն, աւելի անկանոն գծով մը կ՚վազեն, թէև ո՛չ այնքան արագ։ Վեցեակ մը աւելի յառաջ են։ Ահա՛ գագաթն ելան։ Յանկարծ հողին մէջէն ելան և անոնց առջև տնկուեցան մոխրագոյն հագուած մարդիկ։ Ճարոնցիք մութ կապոյտ, ռուսք մոխրագոյն հագած են։ Հրացանք շողացին, մութ կապոյտ համազգեստն անհետ եղաւ։ Աղնիւ վեցերն ինկան։ Բայց ընկերներ կ՚հասնին։ Երկվայրկեան մը, և ահա՛ գագաթն են անոնք ալ։ Մոխրագոյնք նորէն տնկուեցան, փայլուն պողպատէ կուռ գիծ մը։ Եւ կ՚մղուին Ճարոնցիք։ Բայց այս ահաւելի վայրկեանին մէջ իսկ կ՚հնազանդին իրենց սպային հրամանին, որ իրենց առջին կանգնած է սուսերամերկ։ Ճարոնցիք մէկ գծի վրայ են հիմա։ Ռուսաց վրայ կ՚իյնան սուինով։ Սուինները կ՚փայլփլին արեւու լոյսին տակ։ Մոխրագոյն և կապոյտ հագիւ եօթն նարտ հեռի են իրարմէ։ Ակնթարթի մը մէջ իրարու կ՚բախին։ Խիզախ գրոհ մը, և գիրկ գրկի, ոտ ոտի, իրարու կ՚զօդին, և մահը միայն կը բաժնէ զանոնք իրարմէ։ Վայրկեանի մը չափ դիտեցի հրացանի փողերէն հուր ժայթքելն և ցուրտ պողպատներուն իրարու բախիլը։ Եւ յաջորդ վայրկեանին, մոխրագոյն գիծը բեկբեկեցաւ, կտոր կտոր եղաւ, և անտեսանելի եղաւ։ Կապոյտ համազգեստները նորէն քով քովի եկան, իրենց գիծը ցանցառ էր հիմակ, բայց նորէն կարգ կազմելով, դարձեալ խոյացան, զի ետ դառնալ չեն գիտեր այս Ճարոնցիք. Երկրորդ խրամ մը մէջէն մոխրագոյն նոր գիծ մը դուրս ելաւ։ Քաջ են այս Ռուսերը, մահէն չեն վախնար։ Գրոհ մը ևս, գնտակի, սուինի և մարդկային դէմքերու նոր խառնարան մը, և ինչ որ կանգուն մնացած էր մոխրագոյն գծէն՝ Թաւալգլոր կ՚թօթափի լերան միւս կողմը։ Բլուրին ամբողջ այս երեսը ծածկուած է դիակներով։ Բայց Ճարոնցիք կենալ չեն գիտեր։ Անգամ մ՚ևս վերակազմելով իրենց շարքը, կ՚իյնան Ռուսաց ետևէն, լերան դագաթը կ՚հասնին, ուր արեւուն տակ կ՚տեսնեմ հրացաններն անգամ մ՚ևս շողշողելին, և կ՚իջնեն միւս կողմէն։ Ռուսերը դէմ չդրին լերան միւս կողմը, այլ վազեցին փախան մօտակայ անտառի մը մէջ։ Տեսանք փախչող Ռուսերը։ Վերարկուն և հրացանը նետեր էին, և միայն իրենց կեանքը փրկելու համար կ՚փախէին։ Բայց ճարոնական գնտակներուն տարափն ամենուրեք կ՚հասնէր իրենց ետեւէն, և քիչեր ողջ հասան անտառ։»

ԸՆԹԱՑԻԿ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ. — «Նօվօյէ Վրէմիայի Մուգտէնի Թղթակիցը կը հաւաստէ թէ ռուս բանակն ուրիշ ամէն անգամի պատերազմներէն լաւ կ՚հոգացուի այժմ։ Զօրաց զգեստեղէնները ժամանակին հայթայթուեցան, բայց պէտք չէ մոռնալ որ, կ՚ըսէ, լեռնային երկիրներու մէջ մղուած կռիւները շուտով կ՚մաշեցնեն կօշիկները։ Այժմ պատրաստ կայ 200,000 հատ կարճ մուշտակ, 150,000է աւելի չինական հաստ վերարկու, 70,000 Թաղիքէ կօշիկ, 200,000 մորթէ գտակ, 50,000 զոյգ ձեռնոց և 100,000 ալ չինական հաստ կերպասէ շինուած զգեստներ։

, Մուգտէնէ կ՚ծանուցանեն թէ ռուսական բուպլը բաւական ինկաւ։ Մինչ վերջերս չինական պանքանոտը մէկ Թուղթ բուպլին մէկ տոլար 10 սէնդի հետ կ՚փոխանակէին, այժմ մէկ բուպլիին մէկ տոլար կուտան։ Այս անկման պատճառ ցոյց կ՚տրուի Շանկայէ, Ինքաուէ, Շանհայքուանէ և Դիէնձինէ՝ ռուս բանակին դրաւած տեղերն արծաթ բուպլ տարուելուն դէմ Ճարոնցիներուն դրած արգելքը։

, Պէչըէլէ—Վէսթնիքի Ջիֆուի Թղթակիցը կ՚հեռագրէ թէ Բորդ Արթուրի հողային դիրքերուն ծանօթ անձինք շատ ծիծաղելի կ՚գտնեն պահակազօրքին Լիաօդիշան քաշուելու ուղեւորն զրոյցը։ Պահակազօրքը Լիաօդիշան քաշուելու ստիպուելէն առաջ պէտք է որ Ճարոնցիք տիրանան քաղաքին շրջակայ ամրոցներուն, ինչ որ շատ ժամանակի և ահագին զոհերու պէտք ունի։

ԲԼԱՏՈՅԻ խնդրոյն առթիւ Բեդերսպուրկի լրագիրք նորանոր յայտնութիւններ կ՚ընեն, Ծայր. Արեւելք ղրկուած օժանդակ նաւաբաժնին վրայ։ Պլատօ ըսաւ թէ Պալթիկեան նաւաբաժնին Սեպտ. սկիզբն մեկնիլը տարակուսելի էր, և Ռօժտեսդվէնսքիի գործունէութեան շնորհիւ ճամբայ ելաւ։ Նօվօյէ Վրէմիա կ՚գրէ թէ Դեկտ. 3ին Բեդերսպուրկի մէջ ստորագրուեցաւ Գ—նաւաբաժինն սպառազինելու հրամանագիրը, բայց հրամանը 5ին Քրոնշտատ ղրկուեցաւ։ Նոյ. 25ին սկսուեցաւ Աբրաքսին, Սենեավին և Ուշաքով զրահաւորներու նորոգութիւններն ու սպառազինումը, և աշխատութիւնք 1906 Ապրիլ 28ին պիտի աւարտին։ Հիմակ հաստատուեցաւ թէ այս զրահաւորք մէկ ամսուան մէջ կրնային պատրաստ ըլլալ կռուի մտնելու։

Մ. ԲԻՒՎԷՐՎԻԼԻ ՄԱՀԸ. — Էքօ տը Բառիի Թղթակիցը կ՚հեռագրէ Դեկտ. 13 Թուով. — «Ռուս գաղտնի գործակալ մը, որ տեղեակ է Լոնտոնի ճարոնական դեսպանատան գործերուն, պալատական հրամատար Զօր. Հեսի ուղղած է երկու նամակ, որոնց պատճէնները ղրկուած են նաեւ Մ. Տէլքասէի։ Բ. նամակը կ՚վերաբերի Բորդ Արթուրի ֆրանսական նաւային կցորդ Մ. Բիւվէրվիլի և գերման նաւային կցորդ Մ. տը Կիլկենհայմի մահուան վրայ տեղեկութիւններու։ Աւասիկ այս նամակը. —«Լոնտոնի ճարոնական դեսպանը Օգոստ. 28ին հրաման ստացաւ Թօքիոյի կառավարութենէն ծանուցանելու Թերթերուն թէ Բորդ Արթուրի բացերը պահակութիւն ընող ճարոնական յածանաւ մը Օգոստ. 19ի գիշերը տեսաւ Չինական առագաստանաւ մը որ դէպի Ջիֆու կ՚երթար. նշան ըրաւ որ կանգ առնէ, բայց առագաստանաւը կ՚շարունակէր ճամբան, Ճարոնցիներու քննութենէն խոյս տալով։ Զինք հալածեց Թորփիլանաւ մը երեք ռումբ արձակեց, որպէս զի առագաստանաւը կանգ առնէ։ Ռումբ մը առագաստանաւին զարկաւ, և ընկղմելու վրայ էր, երբ Թորփիլանաւն իրեն մօտեցաւ։ Այն ատեն միայն տեսնուեցաւ որ ֆրանսական դրօշ պարզած էր։ Լոնտոնի ճարոնական դեսպանը պատասխանեց Թօքիոյի թէ օգտակար չէր այսպիսի զէկոյց մը հրատարակել Թերթերու մէջ, զի Բորդ Արթուրէ խոյս տուող մարդոց մեծագոյն մասը ֆրանսական դրօշ կ՚պարզէ նաւերուն վրայ, որպէս զի խաբեն Ճարոնցիները։ Սեպտ. 8ին Լոնտոնի ճարոնական դեսպանը նոր հրաման մ՚ընդունեց այս զեկոյցն ընելու Թերթերուն, որպէս զի միտքերը պատրաստուին ֆրանսական և գերման նաւային կցորդներուն մահուան։ Թօքիոյէ հեռագիր մը այսպէս կ՚ծանուցանէ դէպքը.—«Առագաստանաւն հրաման ստացաւ կանգ առնելու, բայց հաւանաբար մառախուղին պատճառաւ, տրուած նշանները չտեսնելով, ճամբան շարունակեց դէպ ի Ջիֆու։ Այն ատեն Թորփիլանաւ մը սկսաւ հալածել զինքը, և քանի մը ռումբ արձակեց զանիկա ընկղմելու համար, ինչպէս սովորութիւն է այսպիսի պարագաներու մէջ։ Առագաստանաւն անմիջապէս հաւաքեց առագաստները, և սկսաւ դէպ ի Թորփիլանաւը գալ, որ դադրեցաւ կրակ ընելէ։ Ճարոնցի սպայ մը առագաստանաւը գնաց, և տեսաւ որ ֆրանսական դրօշի տակ հոն էին ֆրանսացի և գերման նաւային կցորդները։ Ճարոնցի սպան հաստատեց միևնոյն ժամանակ թէ երկու չինացի և գերման նաւային կցորդը սպաննուած էին արձակուած ռումբերէն. և հետեւաբար, առանց գիտութեան՝ թէ զինուորական կցորդի մը վրայ ռումբ կ՚արձակուի։ Ճարոնցի սպան Թորփիլանաւուն կապեց այս առագաստանաւը, և դէպի յածանաւը տարաւ զայն։ Յածանաւուն հրամատարն մնացած դարձածն իմացաւ, և առագաստանաւն ազատ արձակել տալով, հրամայեց որ դէպ ի հարաւ—արեւելք երթայ, և նոյն ժամանակ հրահանգ տուաւ Թորփիլանաւուն որ ընկղմէ զայն, բոլոր մէջը գտնուողներով հանդերձ, որպէս զի դէպքին ականատես վկայ չմնայ, և ճարոնական կառավարութիւնը չստիպուի բացատրութիւն տալ նաւային կցորդներու մահուան պարագաներուն վրայ։ Արդ, մինչ գերման նաւային կցորդը սխալմամբ սպաննուեցաւ, ֆրանսացի նաւային կցորդն ընդհակառակն դիտմամբ սպաննուեցաւ, քանի որ Մ. տը Բիւվէրվիլի հոն ըլլալն հասկցուելէ վերջ իսկ հրաման տրուեցաւ առագաստանաւն ընկղմելու։ Լոնտոնի ճարոնական դեսպանատունը մերժեց այս զեկոյցն հաղորդել, և խորհուրդ տուաւ իր կառավարութեան որ խնդրին պատասխանատուութիւնը ծովահէններու վրայ ձգէ։ Եւ արդարեւ, վերջերս լուր եկաւ թէ Ջիֆուի մէջ ծովահէններ ձերբակալուեր են, և իրենց վրայէն ֆրանսական և գերմանական դրամ գտնուեր է, որով ըսել կ՚ուզուէր թէ անոնք են որ սպաննած են նաւային կցորդները։ Բայց նաւային կցորդներն իրենց երկրին դրամներուն պէտք չունէին ո՛չ պատերազմի Թատրին վրայ, ո՛չ ալ Ջինու մէջ։ Բայց արդէն այս լուրն հերքուեցաւ քանի մը օր վերջը։»

, Այս առթիւ եկած Անգլ. Թերթերու մէջ կ՚տեսնենք թէ Լոնտոնի ճարոնական դեսպանատունը բացարձակապէս կ՚հերքէ այս պատմութիւնն իբր ստայօդ։

ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՉԻՖՈՒ, Դեկտ. 17.— Ռուդէր կը ծանուցանէ թէ Բորդ Արթուրէ հոս հասնող Ռուսեր կ՚հաստատեն ռուս մարտանաւերուն կորուստը, և կ՚յայտարարեն թէ Ճարոնցւոց կողմէ այս մարտանաւերուն փճացումէն կհասկցուի որ Ճարոնցիք յոյս չունին գրաւելու բերդը (!)։ Կ՚ըսեն նաև թէ Թշնամին ո և է գլխաւոր բերդ չէ գրաւած։ Վերջին 30 օրուան մէջ Ճարոնցիք 3 Թորփիլանաւ կորսնցուցին. «203 Մէթր Բլուր»ին վրայ 12,000 Ճարոնցի կորսուեցաւ։ (Ծ. Խ.— Դիւրին է որ այս Ռուսերը Ռուսաց պահպանողական զօրքին մէջէն կուգան, և բան մը չեն գիտեր Ռուսաց կորուստին վրայ, մինչդեռ այնքան լաւ իմացեր են ճարոնական կորուստներուն ստուարագեղեցիկ գումարը։) Վերջին 14 օրուան մէջ պաշարաբարձ 3 շոգենաւ հասան Բորդ Արթուր։ Ռուսք կը յուսան որ բերդաքաղաքը դեռ քանի մը ամիս պիտի դիմանայ։ Ռուսերը բազմաթիւ հեռագիրներ բերին հոս. հասած ատեննին գրեթէ սառած էին։

ԼՈՆՏՈՆ, 17.— «Տէյլի Թէլէկրաֆ» կ՚իմանայ թէ Զօր. Շդէօսէլ նորէն թեթեւապէս վիրաւորուեր է ճարոնական գնտակէ մը. Ճարոնական մարտանաւերը մասնակցեցան Բորդ Արթուրի ռմբակոծման, և շոգենաւ մը խզելով պաշարումը, 1000 Թօնօ ալիւր տարաւ Բորդ Արթուր, ուր կ՚հասնին նաև բազմաթիւ չինական նաւեր։

ԹՕՔԻՕ, 17.— Ռուդէր կ՚ծանուցանէ թէ Զօր. Շդէօսէլ բանակցութեան սկսաւ Զօր. Նօկիի հետ, նաւահանգստին ռմբակոծման ատեն հիւանդանոց—նաւերուն պաշտպանութեան համար որ մէկ քանի անգամ զարնուեցան ճարոնական ռումբերէն։ Ճարոնցիք կ՚յայտարարեն թէ իրենք կ՚յարգեն Կարմիր Խաչի դրօշը, և հիւանդանոց—նաւերը, բայց Ռուսք գործած կ՚ընեն իրենց Թորփիլանաւերն ու փոխադրանաւերը զետեղելով հիւանդանոց—նաւերուն քովը։

ԼՈՆՏՈՆ, 17.— Ջիֆուէ կ՚ծանուցուի թէ Դեկտ. 14էն ի վեր, նոր կռիւներ տեղի ունեցան Բորդ Արթուրի շուրջ, բայց մանրամասնութիւն չկայ։

ԼՈՆՏՈՆ, 17.— Քրաս—Ջէուէ կ՚հեռագրուի թէ Ճարոնցիք բոլորովին քանդեցին Անդաշան ամրոցին խրամատները։

ԲԵՏԵՐՍԲՈՒՐԿ, 17.— Զօր. Սախարով կ՚հեռագրէ Ընդհ. Սպայակոյտին.— «Դեկտ. 14ին ռուս կամաւոր Թեթեւազէններու հետազօտիչ ջոկատ մը մօտեցաւ Բուդիլով բլուրին քովերը գտնուող ճարոնական դիրքերուն և սաստիկ հրացանաձգութիւն մը բանալով թշնամիին խրամատներուն դէմ, մեծ վնաս պատճառեց։

ԲԵՏԵՐՍԲՈՒՐԿ, 17.— Հըլի խնդրոյն կարգադրման համար կազմուած իրաւաբարական յանձնաժողովին ռուս պատուիրակ դեր—ծովակալ Քազնաքով իր խորհրդականներուն՝ Պառոն Դաուպէի, դեր—գնդապետ Շդօնկէրի և Մ. Մանտէլշդամի և Հըլի դէպքին վկայ չորս սպաներու հետ այս իրիկուն Բարիզ կ՚մեկնի։

ԲԱՐԻԶ, 17.—Նախագահ Լուպէ երեքշաբթի պիտի ընդունի Հըլի դէպքին իրաւարար յանձնաժողովը։ Յանձնաժողովին անդամներն ապա պիտի այցելեն Արտաքին գործոց նախարար Մ. Տէլքասէի, և պիտի գումարուին արտաքին գործոց պաշտօնատան մէջ հինգերորդ իրաւարարն ընտրելու։ Կ՚կարծուի թէ այս հինգերորդ անդամը պիտի ըլլայ աւստրիահունգար դեր—ծովակալ Շպաուն։

ԲԱՐԻԶ, 17.— Հըլի դէպքին իրաւարար յանձնաժողովին ամերիկեան պատուիրակ Ծով. Տէվիս իր կնոջ հետ վաղը Բարիզ կ՚սպասուի։

ԼՈՆՏՈՆ, 18.— Թօքիոյէ կ՚հեռագրուի թէ ճարոնական Խորհրդարանը քուէարկեց նիստացոյցը, վերաքննելէ ետք։

ՎԻԵՆՆԱ, 17.— Ֆրանց Եօզէֆ կայսր երէկ մասնաւոր ունկնդրութեան ընդունեց Վիեննայի Օսմ. դեսպան Մահմուտ Նէտիմ փաշա։ Կայսրն այսօր ունկնդրութեան ընդունեց պուլկար գործակատար Մ. Սարաֆովը որ Ֆերտինանտ իշխանին յանձնարարագիրը մատոյց։

ՌՈՒՍԻԱ.—Այն կուսակալք որք համամիտ չէին նոր նախարար Սվիադօբօլք Միրսքի իշխանին ուղղութեան՝ հրաժարական տուին և այսպէս կ՚ենթադրուի նաև Կովկասի կուսակալ Կալիցին իշխանին հրաժարականը, զոր ծանուցինք Շբ. օր։ Նոր նախարարին նպատակն է բոլոր կարելւոյն սիրաշահել հպատակ ժողովուրդները։

Մ. ՄՈՒՐԱՎԻԵՎ. — Բեդերսպուրկէ կ՚հեռագրեն թէ Դատական նախարար Մուրավիէֆ վախճանելով կոմս Բարնիտզի տեղ Վիեննայի դեսպան պիտի անուանուի, եթէ կայսրն ընդունի անոր հրաժարականը։

(Կոմս Նիքոլա Վալէրիանովիչ Մուրավիէվ եղբօրորդին է կոմս Մուրավիէվ—Ամուրսքիի, որ 1858ին, Չինու հետ պատերազմէ ետք, Ռուսիոյ համար գրաւեց Ամուր երկիրը։ 1850ին ծնած է։ Օրէնսգէտ է և երկար ատեն փաստաբանութիւն ըրած է Բեդերսպուրկի և Մոսքուայի մէջ. 1892էն ընդհ. դատախազ եղաւ կայսրութեան ժողովին մէջ։ 1894ին դատական նախարար եղաւ։ Ռուս Պահպանողական նախարարներու դասին կ՚պատկանի, և վերջերս Ներքին գործոց նորընտիր նախարար Սվիադօբօլք Միրսքի իշխանին հետ աններդաշնակ ըլլալուն, հրաժարեցաւ։ Մուրավիէվ իրաւաբանական մէկ քանի գործեր հրատարակած է։ Դիւանագիտական պաշտօն վարած չէ ցարդ։

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ խորհրդարանական անկարգութիւններուն անմիջական շարժառիթն այս է որ Տիսա կոմսին Դահլիճն այնպիսի քուէարկութեամբ մը զոր ընդդիմադիր կուսակցութիւնն անվաւեր կը նկատէ՝ օրէնքի կարգ անցուց Ներքին Կանոնագրի կարեւոր փոփոխում մը, որոյ շնորհիւ այսուհետեւ կարելի պիտի ըլլայ վիճաբանութիւնը փակել՝ հաշակել մեծամասնութեան քուէով։ Այսպիսի օրէնք մը Անգլիոյ Խորհրդարանն ալ ընդունեց Մր. Կլատստոնի առաջարկութեամբ, վերջ տալու համար իռլանտացի երեսփոխաններու վիճաբանութիւնները դիտմամբ երկարելուն։ Ուրիշ Խորհրդարաններու մէջ արդէն կայ՝ մեծամասնութեան քուէով վիճաբանութեան փակումը։ Բայց մաճառ ընդդիմադիր կուսակցութիւնը չընդունիր զայն, և զայրանալով որ բեմին պաշտպանութեան համար 30 պահակներ դրուեր են, Ժողովին բացումէն առաջ ներս խուժեցին, պահակներուն վրայ յարձակեցան և բեմը խորտակեցին։ Դահլիճն այժմ դատի կ՚ենթարկէ այս անկարգութեանց գործիչները, պնդելով թէ երեսփոխանական արտօնութիւնը չարդարացներ այնպիսի անկարգութիւններ։

ԳԵՐՄԱՆԻԱ.—Կայսրը Բրուսիոյ Թագ պատուանշանին Բ. կարգը տուաւ երգահան Լէոնքավալլոյի և ականակուռ ապարանջան մը անոր կնոջ։ Ամէն արարուածէն ետքը Ջերմապէս ծափահարեցաւ Պեռլինի Ռոլանտ Թատերանուագը։ Բայց գերման երաժիշտները կ՚քննադատեն զայն, առարկելով թէ իտալացի երգահանը տեղեակ չէր գերման գրականութեան և Միջին Դարու գերման եղանակներուն, և աւելի իտալական քան գերմանական գործ մը արտադրած է։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԻՆՉՊԷՍ ԱՄՈՒՍՆԱՑՆԵԼ ԱՆՕԺԻՏ ԱՂՋԻԿՆԵՐԸ. —Տիկին Կուինվալտ—Ցերգօվից, աւստրիացի ծանօթ գրագիտուհին՝ ընկերական խնդիրներու մէջ ամէն ատեն իր այժմէութեան Թարմութիւնն անթառամ պահող այս խնդրոյն վրայ խօսեցաւ անցեալ շաբթու գործաւորաց ընկերութեան սրահին մէջ ի Վիեննա։ Բազմաթիւ մայրեր և անօժիտ մանկամարդներ փութացեր էին հոն, իմանալու համար թէ ինչպէս կարելի էր առանց դրամի յաջողիլ ամուսնացնել մը տիրանալու։ Ճառախօս գրագիտուհին նախևառաջ խօսեցաւ աղջկանց տրուած յոռի դաստիարակութեան և արանց պաշարման վրայ, և այս առթիւ շատ բուռն ու կծու հարուածներ տուաւ էրիկ մարդոց հասցէին։ Զօրաւոր սեռին հոն գտնուող ներկայացուցիչները կատարեալ անտարբերութեամբ լսեցին այդ կշտամբանքն և զուարճացան ներկայ մանկամարդներուն խռովեալ դէմքերը դիտելով, զի Տիկին Կուինվալտ առանց ակնածելու կ՚խօսէր և տիկնայք տակաւ վարժուեցան բացատրութեան այդ եղանակին։ Բանախօս գրագիտուհին իր հետաքրքրական ճառին վերջին մասին մէջ ըսաւ թէ ծրագիր մը պատրաստած է օժիտի մնտուկներու հաստատման համար, որոց եկամուտը պիտի ըլլայ ամուրիներէ, ժառանգներէ, այրիներէ և անզաւակ ամուսիններէ գանձուելիք տուրք մը։ Ամբողջ ունկնդիրները որոտընդոստ ծափերով հաւանութիւն յայտնեցին արիւնոտ ըսածներուն և ծրագրին։ Ժողովուրդին մէջ մեծ փութաջանութիւն կայ այժմ օժիտի մնտուկներ հաստատելու ընկերութիւն մը կազմելու։ Տիկին Կուինվալտի բանախօսութեան ունկնդիրներուն փոյթը ցոյց տալու համար կ՚բաւէ ըսել թէ հարիւրաւոր անձինք տեղ չկրցա՛ն գտնել այն սրահին մէջ ուր 3000էն աւելի մարդ կրնայ տեղիլ։

ԱՅՐԻ ԿԱՆԱՆՑ ԿԻԶՈՒՄՆ Ի ՀՆԴԿԱՍՏԱՆ, — Դեկտ. 5 Թուականը կարեւոր օր մ՚էր Հնդկաստանի պատմութեան համար։ 75 տարի առաջ այդ օր էր որ արգիլուեցաւ Հնդիկ այրի կիներու հրակիզման սովորութիւնը։ Այսօր կարելի չէ երևակայել թէ որպիսի յանդուգն ձեռնարկ մ՚էր զոր ըրաւ Լորտ Ուիլեմ Պէնթինք, Հնդկաստանի այն ատենուան կառավարիչը, երբ տեղացւոց այդ սովորութիւնը ջնջելու օրինագիծը ներկայացուց և գործադրեց, զի ոչ միայն տեղացիք կատաղի ընդդիմութիւն մ՚ըրին անոր դէմ, այլ իր երկրացիներէն շատերն ալ հակառակ էին օրէնքին, որ, ինչպէս կ՚ըսէին, կրօնական ներողամտութեան հակառակող հանգամանք ունէր, ինչ որ զգուշանալու էր Հնդկաստանի բնակչաց։ Բայց այդ առարկութիւնն անհիմն էր։ Այրի կիներն այրելու սովորութիւնը իրաւ է թէ շատ հին էր Հնդկաց մէջ և Հնդիկ նուիրական մատեաններու մէկ քանի մեկնութեանց մէջ այդ մասին աննշան խօսքեր կային թէև, բայց եւրոպացի գիտնականաց խուզարկութեամբ հաստատուեցաւ թէ նուիրական մատեաններու մէջ այդ մասին ո և է պատուէր չկար բնաւ։ Այս սովորութիւն հաւանաբար ծագում առած էր

Հնդիկ քուրմերուն դիտմամբ ըրած սխալ մեկնութիւններէն և անգամ մը կրօնքի իբր էական մէկ մասն ընդունուելէ ետք, լուսամիտ Հնդիկներուն համար ալ անկարելի եղած էր ոգորիլ անոր դէմ։ Բայց Լորտ Ուիլեըմ Պենդինքի օրէնքը, Հնդիկ կիներն այրելու գործին մասնակցողներուն կամ թելադրիչներուն մարդասպանի հաւասար պատիժ սահմանելով, այդ սովորութիւն գրեթէ մէկ հարուածով ջնջուեցաւ։ Զարմանալի է որ այդ սովորութեան հակառակողին դէմ Հնդկաց մոլեռանդութիւնն ալ շուտով սմնհատացաւ և այսօր Հնդկաստանի մէջ չկայ մէկը որ այդ սովորութեան վերահաստատման փափաքի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՅՍՕՐՈՒԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Տասանորդի և ընդհ. տուրք վարչութեան Տնօրէն անուանուեցաւ գեր. Տնօրէն Շիւքրի էֆ.։

Սալիհլուի (Այտըն) Գայմագամ անուանուեցաւ Պայանտըրի Գայմագամ Րէֆէդ պէյ, որուն յաջորդեց Սալիհլուի Գայմագամ Պիւրհանէտտին էֆ.։

Նովօրօսիսքի օսմ. հիւպատոս անուանուեցաւ Բ. Դրան Իրաւագիտաց Սենեկին օգնականներէն Պէշիր պէյ։

—Սալիսէի աստիճան տրուեցաւ Հայրապոլսի Գայմագամ Ահմէտ Հիլմի պէյի և Թղթատարական Վարչութեան Խորհրդականի Ա. քարտուղարի օգնական Նուրի պէյի։

—Գ. Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ Գաստըմոնիի Նահանգին կուսակալի օգնական Տանիշ էֆ.ի. Ա. Մէճիտիյէ՝ Կայսերական Թիկնապահ Միրլիվա Րիզա փաշայի. Բ. Օսմանիյէ՝ Սպարապետի Դրան ընդհ. դատախազի օգնական Միրլիվա Ֆաուզի փաշայի։

Ա. Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Անատօլուի երկաթուղւոյ Ընդ.եան պաշտօնատար և Գոնիայի գծին շինութեանց Տնօրէն Մ. Մարէնգըրի. Բ. Մէճիտիյէ՝ Ֆրանքֆօրդի երկաթուղւոյ շինութեանց Ընդ.եան Տնօրէն Մ. Րէպլէ Օթթոյի. Գ. Մէճիտիյէ՝ Գոնիայի գծին Ա. ճարտարագէտ Մ. Տինքլէր Ժանի, և Բ. ու Գ. Օսմանիյէ՝ Գարամանի և Էրէյլիի գծերուն Ա. ճարտարագէտներուն։

Գ. Օսմանիյէ՝ Պետական Խորհուրդին ելմտական ճիւղին Ա. օգնական Իպրահիմ պէյի և Հալէպի իտալական հիւպատոս Մ. Ատոլֆ Սոլոյի։

Բ. Շէֆգաթ՝ կայսերական Պալատան թարգմանիչներէն Անճէլօ պէյի տիկնոջ։

Լիագաթի ոսկի չքանշան՝ Պետական Խորհրդոյ ելմտական ճիւղին անդամ Հաֆըզ Վէյսի էֆ.ի։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՃԵԿՈՒՑՈՒՄ

«Երէկ իրիկուն, Կայսերական Պալատան մէջ, կայսերական կոչունք մը տրուեցաւ ի պատիւ գերման դեսպան Պառոն Մարշալ ֆօն Պիպէրշդայնի։ Սոյն կայս. կոչունքին ներկայ ըլլալու պատիւ ունեցան Նաեւ Բարձր. Մեծ—Եպարքոսը, Դատական Նախարարը, Սպարապետը, Պետական Խորհրդոյ նախագահը, Արտաքին, Ներքին և Ծովային գործոց նախարարները, Արքունի Թնդանօթարանի Մուշիրը, Ելմտական, Եվգաֆի, Հանրօգուտ շինութեանց և Կրթական նախարարք, Եպարքոսական խորհրդականը, Երկրագործական նախարարը, Գերմանական Սփօղ դպրոց մարտանաւին հրամատարն և սպաները, Գերմանական դեսպանատան պաշտօնատարները, Կայսերական Պալատան պաշտօնատարները, Օսմ. Տէրութեան ծառայութեան մէջ գտնուող գերման անձնաւորութիւնք, Հանրային Պարտուց Վարչութեան գերման արժէտէրերու ներկայացուցիչ Մ. Թէսդա, Անատօլուի երկաթուղւոյ Ընկերութեան ընդհ. Տնօրէն Մ. Զանտէր և գեր—Տնօրէն Մ. Հիւկնէն և Տօքդ. Միւլլէ։ Սփօղ դպրոց շոգենաւին ուսանողներն ալ ուրիշ դահլիճի մը մէջ դրուած սեղանի մը վրայ ճաշեցին։ Կայսերական կոչունքէն վերջ, յիշեալ շոգենաւին հրամատարը շնորհակալութիւն յայտնեց կայսերական մեծամեծ շնորհներուն համար, և այսօր Կ. Պոլսէ մեկնելուն առթիւ իր հրաժեշտի ողջոյնը մատոյց յոտս Կայսերական Գահոյից։»

ԿԱՅՍ. ԿՈՉՈՒՆՔ. — Ինչպէս Պաշտօնական Ճեկուցումէն կ'երեւի, երէկ իրիկուն Կայսերական Պալատան մէջ ճոխ կոչունք մը տրուեցաւ ի պատիւ գերման դեսպան Պառոն Մարշալ ֆօն Պիպէրշդայնի և Սփօղ դպրոց—մարտանաւին հրամատարին։ Սփօղի սպաներն և ուսանողներն երէկ իրիկուն ժամ 11½ին Րէհզէր և Բօպէթ շոգենաւակներով Տօլմապահչէի քարափն եկան իրենց հիւրամեծարներուն հետ, եւ պալատական կառքերով Կայսերական Պալատ գացին։ Սպաներն և նաւազներն իրենց կուրծքերը զարդարած էին շնորհուած պատուանշաններով և Լիագաթի արծաթ չքանշաններով։

—ՎԵՀ. ԿԱՅՍԸ ժամ կէսին միջօգները նախագահեց փառաւոր սեղանին։ Սփօղի նուագախումբն ածեց Համիտիյէ քայլերգն ու գերման քայլերգը։ Կոչունքին ներկայ էին Նաեւ Բարձր. Մեծ—Եպարքոսն և բոլոր Նախարարները, գերման դեսպանատան պաշտօնատարները, օսմանեան ծառայութեան մէջ գտնուող գերման պաշտօնատարները, և Անատօլուի երկաթուղւոյ ընկերութեան Ընդհ. և գեր—Տնօրէնները։ Սփօղի ուսանողներն և նուագախումբն ալ ուրիշ դահլիճի մը մէջ ճաշեցին։

—Կոչունքէն վերջ, Գերման դեսպան Պառոն Մարշալ և Սփօղի հրամատարը պատիւ ունեցան ՎԵՀ. ԿԱՅՍԵՐ ներկայանալու, և այս առթիւ զատ զատ իրենց երախտագիտական զգացումներն յայտնեցին այն համակրալիր ընդունելութեան ու կայսերական շնորհներուն համար որոց արժանացած էին Սփօղի հրամատարը, սպաներն եւ ուսանողները։ Ժամ 3½ին իրենց հրաժեշտի ողջոյնը մատուցանելով, վերադարձան նոյն հանդիսաւորութեամբ որով եկած էին։ Հիւրամեծարները մինչեւ շոգենաւ երթալով, ողջերթ մաղթեցին Սփօղի հրամատարին և սպաներուն։ Սփօղ այս առաւօտ կանուխ մեկնեցաւ ուղղակի Աղեքսանդրիա, ուր պիտի անցընէ Ծննդեան տօնը։

—ՎԵՀ. ԿԱՅՍՐՆ ընտիր շաքարեղէններ և «սիկարէթ»ներ նուիրեց Սփօղի հրամատարին և սպաներուն։

—Սփօղի հրամատարն երէկ միջօրէին հրաժեշտի հացկերոյթ մը տուաւ իր շոգենաւին մէջ։

ՌՈՒՍԻՈՅ ՎԵՀ. ԿԱՅՍԵՐ անուան տարեդարձին առթիւ, Օսմ. պահականաւն այսօր ըստ սովորութեան դրօշազարդուելով, միջօրէին թնդանօթներով ողջունեց սոյն տարեդարձը։ — Այս առաւօտ ռուսական դեսպանատան մատրան մէջ գոհաբանական պաշտօն մատուցուեցաւ, որմէ վերջ ռուս դեսպան Մ. Զինովեվ դեսպանատան դահլիճին մէջ շնորհաւորական ընդունելութիւն մը կատարեց։

ՀԱՄԻՏԻԷ ՄԱՆԿԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ.—Համիտիյէ մանկանց հիւանդանոցին Տնօրէնութիւնը, ամէն տարի, Կայսերական Գահակալութեան առթիւ, վիճակագրական ընտիր հատուածոյ մը կ'հրատարակէ, որմէ մէյմէկ օրինակ կ'ղրկէ Թուրքիոյ և արտասահմանի բոլոր բժշկական համալսարաններուն, հիւանդանոցներուն և մատենադարաններուն։ Այս տարի եւս, նոյն հիւանդանոցին Տնօրէնութիւնն հրատարակած է իր հինգերորդ վիճակագրական հատուածոն, որմէ 350 օրինակ ղրկած է Գերմանիոյ, Ֆրանսայի, Անգլիոյ, Ռուսիոյ, Իտալիոյ, Աւստրիոյ, Սպանիոյ, Պելժիոյ, Հոլանտայի, Շուէտի, Պոմպայի, Թօքիոյի, Նիւ—Եօրքի, Շիքակոյի, Ֆիլատելֆիոյ, Սան—Ֆրանչիսքոյի, Մեքսիկայի և ուրիշ երկիրներու հիւանդանոցներուն համար։ Բոլոր քաղաքակիրթ երկիրներու հռչակաւոր բժիշկներն իրենց գնահատութիւնն ու գոհունակութիւնը գրաւորապէս հաղորդած են Համիտիյէ մանկանց հիւանդանոցի բժշկապետին։

ՀԱՆՐ. ՊԱՐՏՈՒՑ Վարչութիւնը, իր պաշտօնէից բարօրութեան նկատմամբ տածած յարատեւ հոգածութեամբ, որոշեց Հանգստեան թոշակի Սնտուկ մը հաստատել։

ԵՓԵՍՈՍԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ.— Եփեսոսի պեղումներուն վրայ խօսելով, Նոյէ Ֆրայէ Բրէսէ կ'ըսէ թէ դասական արուեստին ամէնէն նշանաւոր առարկան է Եփեսոսի մատենադարանին այն բարձրաքանդակը, որ պատանի մը կ'ներկայացնէ երկու մօրուաւոր մարդերու միջեւ։ Գլուխները միեւնոյն դիմագծերն ունին Օգոստոս կայսեր Խաղաղութեան Խորանին հռչակաւոր խոյակին (ֆրիզ, սիւնի գլուխ) ներկայացուցած դէմքերուն հետ։ Երկու մօրուաւոր մարդերն ըլլալու են Մարկոս Աւրելիոս և Վերոս Հռոմայեցի կայսրերը, իսկ պատանին՝ դեռատին Քոմոտոս (Մարկոս Աւրելիոսի որդին)։ Այս եզրակացութիւն կ'հիմնուի սա իրողութեան վրայ թէ միւս բարձրաքանդակները կը ներկայացնեն Պարթեւներու հետ պատերազմին զանազան միջադէպերը։ Հաւանական է որ Եփեսոս քաղաքը, իր երախտագիտութիւնն յայտնելու համար Հռոմայեցի կայսրերուն, մատենադարան մը կառուցած է իբրեւ յիշատակարան այդ արշաւանքին յաղթ ելքին։ Կ'կարծուի թէ բարձրաքանդակները խորանի մը մասը կը կազմեն։

ՀԱՆՐԱԿԱՌՔ.—Առեւտրական և հանրօգուտ շինութեանց նախարարութենէն մենաշնորհ խնդրուած է Գատըգիւղի արուարձանին մէջ հանրակառք (օմնիպիւս) բանեցնելու։ Մատուցուած ծրագիրն այժմ կ'քննուի Քաղաքապետական Խորհուրդին մէջ։

ՌՈՒՄԷԼԻԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ.— «Ժուռնալ տը Սալօնիք» կ'ծանուցանէ թէ Ռումէլիի նահանգներու ընդհ. Քննիչ Հիւսէյին Հիլմի փաշա կարգապահական խիստ միջոցներ ձեռք առեր է, խափանելու համար այն աւազակախումբերն որք հոս հոն երեւան ելած են և անզօրներուն վրայ կ'յարձակին։

ՁԵՐԲ. ՊԱՇՏՕՆԵԱՅ. — Բրոմագրի Նախագահ Աթենի անդամ Հիւսէյին էֆ. օրէնքի հակառակ և կողմնակալ ընթացքին պատճառաւ դատաստանի ենթարկուեցաւ։

ՍԱՄՍՈՆ իւղանաւակատութեան վարչական Ժողովոյն երկու անդամները, Մ. Լէվանդիս և Մ. Եօանիտէս երկու տարի առաջ դատապարտուած էին, առաջինը 10 տարի բերդարգելութեան և երկրորդը 2 տարի բանտարկութեան։ Լէվանդ Հերալտ կ'ըսէ թէ այս երկու ժողովականները քանի մ'ամիս առաջ արձակուած ըլլալով, զիրենք դատապարտող դատաւորներուն դէմ դատ բացած են այժմ, և վնասուց հատուցում կ'պահանջեն, առաջինը՝ 467,000 ղշ. և երկրորդը 75,000 ղշ.։

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ. — Պուլկարերէն Մէջ լրագիրը կ'ծանուցանէ թէ իշխանապետութիւնն որոշեր է աւելցնել կրթական տուրքը, ոգելից ըմպելիներու և լուցկիի մաքսատուրքերը։

—Ռումանիոյ և Պուլկարիոյ միջեւ առեւտրական պայմանագրին պայմանաժամը կ'լրանայ 1905 Յնվ. 1ին։ Կ'կարծուի թէ առժամաբար պիտի նորոգուի։

ԲՈՒՐԴԻՆ ԳԻՆԸ. — Եւրոպական զանազան երկիրներու մէջ ոչխարները պակսած ըլլալով, Թուրքիոյ բուրդերուն համար մեծ խնդրանք կայ Անգլիոյ, Գերմանիոյ և Աւստրիոյ մէջ։ Էնկիւրիէ կը գրեն թէ բուրդին գինը 1 ղշ. և թիֆթիքի գինն ալ 2½ ղշ. վրայ դրած է։

MAISON de NOUVEAUTÉS N.A. SARRIS
Grand' Rue de Péra, Nº. 342

ՊԶՏԻԿ, ԱՅԼ ԻՐԱԿԱՆ
ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

Նորաձեւութեանց Սարրիս Տունը, Բերա, Մեծ—Փողոց, Թիւ 342, որ այնքան հանրածանօթ է, անգլիական եւ ֆրանսական նորաձեւութեանց մեծ մթերք մը գնած ըլլալով, և փափաքելով իր յարգոյ յաճախորդներուն ներկայացնել բացառիկ առիթ մը Նոր Տարւոյ առթիւ, աժան գիներով ցուցադրութիւն մ'ըրած է որ ճշմարիտ զարմանք մը պիտի պատճառէ հասարակութեան։ Ամենադժուարահաճ յաճախորդներն իսկ գոհացում պիտի ստանան։ Նշանակեալ գիներուն վրայ հետեւեալ կերպով զեղչ եղած է. —20% պերճանքի, արուեստի, արծաթեղինաց, ոսկերչութեան, կաշեղէնի, գոհարեղինաց և փղոսկրի վերաբերեալ առարկաներու վրայ։ 15% զեղչ՝ հիւսեղինաց և գլխարկներու վրայ։ 10% զեղչ՝ անուշահոտութեանց, ձեռնոցներու, հովանոցներու և սեղմիրաններու վրայ։ 10—1

ՔՐՈՆԻԿ ՀԱՅ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ս. Պատրիարք Հայրն երէկ Նէնի Գափու Ս. Թադէոս և Բարթողիմէոս եկեղեցւոյն մէջ հանդիսաւոր կերպով պատարագեց եկեղեցիին տօնախմբութեան առթիւ։ Ն. Սրբազնութիւնը Շաբաթ իրիկոյ նախագահեց «Եկեսցէ»ի արարողութեանց, և գիշերն հիւրասիրուեցաւ Ցարաւիւն էֆ. Բէօմիւրճեանի բնակարանը։ Երէկ առաւօտ, ստուար բազմութիւն մը հաւաքուած էր եկեղեցիին մէջ, և արարողութեանց կ'մասնակցէր Գում Գափուի դպրաց դասն ալ։ Ս. Պատրիարք Հայրն օրուան տօնին վրայ գեղեցիկ քարոզ մը խօսեցաւ, ըսաւ թէ Հայ. Եկեղեցւոյ հիմնադիրներն եղան Ս. Գրիգոր Լուսաւորչէ առաջ Թադէոս և Բարթողիմէոս Առաքեալները, որուն համար Հայ. Եկեղեցին կ'կոչէ զանոնք Առաջին Լուսաւորիչ։ Մեր Եկեղեցին առաքելական է, զի Թադէոս և Բարթողիմէոս առաջին անգամ քարոզեցին քրիստոնէութիւնն և հիմնեցին Հայրապետական Աթոռը։ 1900 տարի առաջ, երբ դեռ անծանօթ կ'մնային ներկայ երկիրներէն շատերը, և Քրիստոսի քարոզութեան շրջանակը սահմանափակ էր, առաքեալները Բանին կենաց ճշմարտութիւնը սկսան քարոզել, ուր որ Քրիստոս չէր կրնար անձամբ այցելել, իրենց քարոզած եկեղեցիները կոչուեցան Առաքելական։ Մեք կ'պարծինք Ս. Գրիգոր Լուսաւորիչով ու կ'փառաւորենք զայն, բայց պէտք չէ մոռնանք թէ Լուսաւորչէ 300 տարիներ առաջ Քրիստոնէութիւնն արդէն ծաւալած էր մեր մէջ, Թադէոս և Բարթողիմէոս Առաքեալներուն միջոցաւ, և Լուսաւորիչ Քրիստոսի 301 թուականին վիրապէն ելաւ և տարի մը վերջ սկսաւ քարոզութեան և փրկագործութեան, 302 թուականին ալ հիմնեց Էջմիածնայ Աթոռը, երկնային տեսիլով, օծեց Տաճարն ու բազմեցաւ հոն։ Ուրեմն այսօր Հայ. Եկեղեցին կ'տօնէ Առաջին Լուսաւորիչ Թադէոս և Բարթողիմէոս առաքեալներուն տօնախմբութիւնը, որոց Նախ քան Լուսաւորիչ քրիստոնէութիւն քարոզելը կ'հաստատեն Յոյն ու Լատին պատմագիրները։ Այս երանաշնորհ առաքեալներէն Ս. Թադէոսի գերեզմանը կ'գտնուի Արտազու վանքին մէջ, ուր թաղուեցաւ նահատակութենէն յետոյ. և Ս. Բարթողիմէոսի նշխարներն ու գերեզմանը կը գտնուին Աղբակու վանքին մէջ։ Այս գերեզմաններուն գոյութիւնը գրական ապացոյց մ'է առաջ մեր Եկեղեցւոյն առաքելականութեան։ Ն. Սրբազնութիւնն յիշեց Առաջին Լուսաւորիչներէն մինչեւ Ս. Գրիգոր իրարու յաջորդող Հայրապետները, և յայտնեց թէ Ս. Բարթողիմէոս Քրիստոսի աստուածութեան դաւանող առաջին առաքեալն եղաւ, ինչպէս այս պարագան կ'յիշատակէ Աւետարանը, յիշելով Նաթանայէլն որ Ս. Բարթողիմէոսի հրէական անունն է։ Այսօրուան տօնը, մեր սրտին ամէնէն մօտ տօնն է, զի Թադէոսի և Բարթողիմէոսի գոյութեամբ, կ'պարծեցնենք մեր եկեղեցին քոյր եկեղեցիներու առջեւ։ Ն. Սրբազնութիւնն յորդորեց որ անկեղծ սիրով և Ս. Առաքելոց քարոզութեանց հետեւելով, անոնց պատուէրներն յարգելով ցոյց տանք մեր՝ Հայ. Առաքելական Ս. Եկեղեցւոյ հարազատ զաւակներ ըլլալը։ Նշանակութիւն չունի, ըսաւ, պատիր, ինքնախաբ սիրով մը պարծենալ թէ մեր Եկեղեցին Առաքելական է։ Ն. Սրբազնութիւնն ապա բարեմաղթութիւններով վերջացուց իր խօսքերը։ Յաւարտ արարողութեանց, Ս. Պատրիարք Հայրն հանդիսաւոր թափորով Թաղ. Խորհրդարան առաջնորդուեցաւ ուր բարեմաղթութիւններ կատարեց ՎԵՀ. ԿԱՅՍԵՐ արեւշատութեան համար, ներկաներուն սրտաբուխ «ամէն»ներուն մէջ, և պահ մը հանգստանալէ յետոյ առաջնորդուեցաւ Բէօմիւրճեան էֆ.ի բնակարանին ուր հացկերոյթ մը տրուեցաւ ի պատիւ Ն. Սրբազնութեան։ Սեղանին վրայ, Ն. Սրբազնութիւնն յիշեց թէ 25 տարուան քարոզչական շրջանին մէջ 1700 քարոզ խօսած էր։ Ս. Պատրիարք Հայրն դրամական նուիրատուութիւններ ըրաւ Թաղին կարօտեալներուն։

—Իզմիրէ կ'գրեն մեզ Դեկտ. 4 թուով. «Տ. Եղիշէ եպսկ. Դուրեան Շբ. միջօրէին քաղաքս ժամանեց. իսկոյն Առաջն. փոխանորդն եւ վարչական մարմինն յատուկ շոգեմակոյկով բարի գալստեան փութաց։ Շոգենաւուն սրահին մէջ բարի գալստեան շնորհաւորութիւնները տեղի ունեցան։ Ապա, Դուրեան Սրբազան շոգեմակոյկով քարափ առաջնորդուեցաւ, ուր հաւաքուած էր խուռներամ ժողովուրդը, հակառակ խիստ տեղատարափին. խանդավառութիւնը մեծ էր։ Դուրեան Սրբազան կառքերով եկեղեցի առաջնորդուեցաւ, ուր քահանայից ու դպրաց դասն «Հրաշափառ»ով ընդունեցին. հակիրճ քարոզ մը խօսեցաւ, օրհնեց ժողովուրդն եւ հանդիսաւոր բարեմաղթութիւններ կատարեց ՎԵՀ. ԿԱՅՍԵՐ արեւշատութեան համար, սրտագին «ամէն»ներու մէջ։ Առաջնորդարանին մէջ ընդունեց պաշտօնական մարմնոց շնորհաւորութիւնները, և ուր շնորհաւորական ուղերձներ արտասանուեցան։»

—Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Ա. Գործակատար Արիս էֆ. Փէշտիմալճեանի, Շբ. օր Կայս. Պալատ գնաց։

—Ի դիմաց Ս. Պատրիարք Հօր, Փոխանորդ Սրբազանն և Ա. գործակատար Արիս էֆ. այսօր ռուսական դեսպանատունը գացին, ի շնորհաւորութիւն Նիքօլա կայսեր անուան տարեդարձին։

—Տ. Բարթողիմէոս Արքեպսկ. Ջամճեանի անուան տարեդարձին առթիւ, երէկ կրօնական և աշխարհական բազմաթիւ ծանօթ անձնաւորութիւններ շնորհաւորական այցելութիւն տուին։ Ս. Պատրիարք Հայրը շնորհաւորական այցաքարտ մը ղրկած էր։

—Ս. Հայրապետն յանձնարարած էր Ազգ. Պատրիարքարանին որ Տ. Մելքիսեդեկ Սրբազանի եկեղեցական զգեստները Գանձակի Ս. Թարգմանչաց վանքը ղրկուին, ինչպէս կտակած էր Ն. Սրբազնութիւնը։ Սակայն Գանձակէն գիտել կը տրուի թէ ոչ և է ապահովութիւն չկայ այդ զգեստներուն անվնաս պահպանման համար, վանքն անկերպարան ու անխնամ վիճակի մէջ կ'մնայ այսօր։ Կ'առաջարկուի այդ արժէքաւոր զգեստները պահել Տփղիսի Ս. Թարգմանչաց եկեղեցիին մէջ, և ամէն Ս. Թարգմանչաց տօնին նոյն զգեստներով պատարագ մատուցանէ Տփղիսի Առաջնորդը կամ եպիսկոպոս մը։

ԱՅՍՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ԲՈՐԴ ԱՐԹՈՒՐ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ԶՕՐ. ՍԹԷՕՍԷԼԷՆ.— ՃԱԲՈՆՑԻՔ ԳՐԱՒԱԾ ՎԻՍՕՔԱՅԱ ԼԵՌԸ

«ՍԵՒԱՍՏԱՓՈԼ,, ԹՈՐՓԻԼԱՀԱՐ ԸՆԿՂՄԱՆ

ԹՕՔԻՕ, Դեկտ. 18.— Ռէօյթէր կ'ըսէ թէ Բորդ Արթուրը պաշարող բանակէն հասած լուրերու նայելով, Սեվաստոփոլ զրահաւորը ճաբոնական թորփիլանաւերու կողմէ տասն անգամ թորփիլահար եղած է կատարեալ յաջողութեամբ։ Զրահաւորը բոլորովին ծովին տակը գացած է և հաւանաբար ալ ու և է ծառայութեան անյարմար է։

ԲԵՏԵՐՍԲՈՒՐԿ, 18.— Պալթիկ ծովու և Նաւահանգիստներուն հրամատար ծովակալ Պիրիլէվ պաշտօն ստացաւ Պալթիկի երրորդ նաւատորմին պատրաստութիւնը և հրամատարութիւնն ստանձնելու։ Ծովակալ Պիրիլէվ Լիպաւա մեկնեցաւ։

ԲԵՏԵՐՍԲՈՒՐԿ, 18.—Զօր. Սթէօսէլ հետեւեալ հեռագրերն ուղղած է Կայսեր.

ԲՈՐԴ ԱՐԹՈՒՐ, Նոյմ. 25. — Ճաբոնցիք ամսոյս 20էն յարձակեցան բերդաքաղաքին հիւսիս—արեւելեան բերդերուն վրայ, բայց հետ մղուելով ցիր ու ցան եղան մեր ռումբերէն։ 23ին յարձակումը կրկնեցին միեւ նոյն ամրոցներուն վրայ, և մինչեւ իսկ յաջողեցան գրաւել մեր պատնէշներուն մէկ մասը. բայց անոնց և զօրաց միջեւ գիրկընդխառն բուռն կռիւ մը սկսելով, ստիպուեցան նահանջել։ Ճաբոնցիք այս կռիւին մէջ կորսնցուցին աւելի քան 2000 հոգի։ Ճաբոնական ռմբակոծութեան հետեւանօք, քաղաքին շէնքերուն մէկ մասը քանդուեցաւ։ Նաւահանգիստն ալ վնասուեցաւ։

ԲՈՐԴ ԱՐԹՈՒՐ, Նոյմ. 23. — Ամսոյս 15էն 16 լուսնալու գիշերը մեր ձախ կողին դէմ Պալուէնկըան և Վիսօքայա բլուրներուն վրայ սկսուած բոլոր յարձակումներն ետ մղուեցան և Ճաբոնցիք մեծ կորուստ կրեցին։ Նոյմ. 26ին Ճաբոնցիք բուռն յարձակում մը ձեռնարկեցին մեր հիւսիս—արեւելեան ճակատի ամրոցներուն և մեր յառաջացեալ պատնէշներուն դէմ, և ահռելի ճակատամարտ մը սկսաւ։ Նոյմ. 27ի գիշերը, մեր դիւցազները վանեցին թշնամին որ հետ քաշուեցաւ, բազմաթիւ մեռեալներ թողլով ճակատամարտի դաշտին վրայ։

ԲՈՐԴ ԱՐԹՈՒՐ, Դեկտ. 2.— Նոյեմ. 20էն Ճաբոնցիներուն սկսած յարձակումը (հիւսիս—արեւելեան բերդերուն դէմ) վերջապէս հետ մղուեցաւ միայն այս գիշեր։ Եթէ մեր դիւցազն զօրքերը կարող եղան զանոնք վանելու, պէտք է մասնաւորել այս քաջութիւնը, զի երբեք ճաբոնական յարձակում մ'այնքան բուռն չէր եղած որքան եղաւ այս յարձակումը։ Ճաբոնցի գերիներու պատմութեանց նայելով, մեր թշնամին աւելի քան 20,000 հոգի կորսնցուցած է այս ճակատամարտներուն մէջ։

ԲՈՐԴ ԱՐԹՈՒՐ, Դեկտ. 5.—Երէկ Ճաբոնցիք նորէն յարձակեցան Վիսօքայա բլուրին վրայ, և իրիկուան ատեններ յաջողեցան անոր կատարը գրաւել, որուն վրայ զետեղեցին բազմահարուածեան երկու թնդանօթ։ Մեր վիրաւորներուն մէջ կ'գտնուի Զօր. Զէրբինսքի։

ԲՈՐԴ ԱՐԹՈՒՐ, Դեկտ. 10. — Ճաբոնցիք ամսոյս 6ին գրաւեցին Վիսօքայա բլուրը (նորէ՞ն գրաւեցին ետ մղուելէ ետքը)։ Զօր. Զէրբինսքի մեռաւ իր առած վէրքերէն։

ՆԱՍԻՕՆԱԼԻ ԵՒ ՖՈՒՌՆԻԷԻ

ՃԱԲՈՆԱԿԱՆ ՅԱՂԹՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ ԶՕՐ. ՍԱԽԱՐՈՎԷ

ԲԵՏԵՐՍԲՈՒՐԿ, Դեկտ. 18. — Զօր. Սախարով կ'հեռագրէ Ընդհ. Սպայակոյտին.—Դեկտ. 15ին 3,000 հոգիէ բաղկացած ճաբոնական զօրագունդ մը յանկարծակի բերաւ մեր բանակէն կարեւոր զօրագունդ մը որ թշնամիին ուշադրութիւնն այլուր դարձնելու համար կ'ջանար արեւմտեան շարժում մ'ընել Շիւնշէնկի հիւսիս—արեւմտեան կողմը։ Ցոյժ բուռն ճակատամարտէ մը վերջ, մեր զօրքերը պարտաւորուեցան ետ քաշուիլ դէպ ի Մուգտէն։ Մեր ու թշնամիին կորուստները խիստ մեծ են։

ԼՈՆՏՈՆ, 18.— Սէնթրըլ Նիւզի մանչուրեան թղթակիցը Մուգտէնէ կ'հեռագրէ թէ ռուսական աջ թեւէն քանի մը ջոկատներ, որք յարձակողական շարժում մը կ'կատարէին Հօքիացուանկի արեւելեան կողմը, ճաբոնական ստուար ոյժերու հանդիպեցան։ Ճաբոնցիք, որք թնդանօթներ ունէին, պարտաւորեցին Ռուսերն իրենց զօրքերը վերադարձնելու։ Ռուսական կորուստները բաւական ծանր են։

18.— Բէյրդատունէ կ'հեռագրուի թէ Պալթիկի ռուսական նաւատորմին վերաբերող երեք զրահաւոր և մէկ փոխադրանաւ Սիմոնսդաունի ծովախորշն հասած են։

Սէուլէ կ'հեռագրուի թէ մեծ յուզում կայ հիւսիսային Քորէայի մէջ։ Մի—Եու քաղաքին պահպան զօրքերուն վրայ 1,200 Ճաբոնցիք աւելցան։

ԼՈՆՏՈՆ, 19.— Թօքիոյէ կ'հեռագրուի թէ Զօր. Նօկիի մէկ տեղեկագրին նայելով, Սեւաստոփոլ զրահաւորը կրնայ պատերազմելու անկարող նկատուիլ այլեւս։

ՓԱՐԻԶ, 11.—Մ. Մարսէլ Ապէռ որ Բարձրագոյն Ատեանին կողմէ տարագրման դատապարտուած էր, երէկ Փարիզ վերադարձաւ աքսորավայրէն։ Իր ժամանումը ջերմ ցոյցերու տեղի տուաւ։

ՀՌՈՄ, 19.—Իտալիոյ Խորհրդարանն իր նիստերը դադրեցուց մինչեւ Յնվ. 23։

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

(ԼՈՒՐԵՐ ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱԲԵՐՈՎ. ԴԵԿՏ. 17.)

ՄԱՆՉՈՒՐԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՅՐԷՆ

ՀՈՒՆԿՈՒԶՆԵՐՈՒՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ

ԲԵՏԵՐՍԲՈՒՐԿ, Դեկտ. 16.— Մուգտէնէ կ'հեռագրեն թէ ճաբոնցիներու ծառայութեան մէջ գտնուող Հունհուզները Կլօպանցի կայարանին մէջ յարձակեցան վակօնի մը վրայ, որուն մէջ Ռուսերէն վարձուած Չինացիներ կային և իրենց հետ տանելէ ետք, սպաննեցին զանոնք։

Պէթէրպուրկի Վէտոմոսթի այս դէպքին առթիւ կ'գրէ. — Կլօպանցի կայարանին մէջ ճաբոնցի ծպտեալ զինուորներ երեք սպաներու հետ երկաթուղւոյն ճամբորդներուն վրայ յարձակեցան։

ԲԵՏԵՐՍԲՈՒՐԿ, Դեկտ. 16.— Տացիաօէն կ'հեռագրեն Դեկտ. 15 թուով. — Երէկ երկու կողմի յառաջապահներուն միջեւ տեղի ունեցած ընդհարման մը պահուն տեսնուեցաւ որ ճաբոնական գնտակներն հողին դպած ատեննին հոտ մը և մթորակ փայլ մը կ'հանէին, ինչ որ կ'ըլլայ պայթման մը ատեն։ Ռուս զինուորներէն մին բազուկէն վիրաւորուեցաւ այդպիսի գնտակով մը, որ ծակելով դուրս ելաւ մարմնէն։ Գնտակէն յառաջ եկած ծակը 1½ վէրշօք է (մէկ վէրշօք = 4.44 սանդիմեթր)։ Կ'երեւի թէ Ճաբոնցիք սկսան պայթուցիկ գնտակներ գործածել։

ԲՈՐԴ ԱՐԹՈՒՐԻ ԱՌՋԵՒ

ԼՈՆՏՈՆ, Դեկտ. 16.— Սեվաստոփոլի դէմ թորփիլանաւերու յարձակումը մեծ արդիւնք չունեցաւ։ Դեկտ. 14ին, առաւօտեան ժամ 3½ին Օսթէն հրամատարն և Միյամօդօ տեղակալը զատ զատ տորփիլներով յարձակեցան Սեվաստոփոլի և նաւահանգստէն դուրս գտնուող ռուս փոխադրանաւերուն դէմ։ Օսթէնի տորփիլը ձեան բուռն մրրկի պատճառաւ չկրցաւ իր նպատակին հասնիլ։ Իսկ Միյամօդօյի տորփիլը, առանց նշմարուելու Ռուսերէն, յառաջացաւ ուղղուած կէտը, բայց հոն կորսնցուց միւս տորփիլներն հետքը։ Ժամ 4ին, Նաքամուտայի հրամանին տակ թորփիլանաւ մը յարձակեցաւ փոխադրանաւու մը վրայ և Միյամօդօ թորփիլ մ'արձակեց Սեվաստոփոլի վրայ։ Երկու թորփիլներն ալ հասան իրենց ուղղուած կէտերուն։ Սեվաստոփոլ ընկղմեցաւ ցռուկին կողմէն մինչեւ թորփիլ արձակելու խողովակը։ Ճաբոնական երկու թորփիլանաւերն անվնաս ետ դարձան, բայց ճաբոնական երրորդ թորփիլանաւ մը անհետացաւ։ Ռուսերը պողպատէ ցանցեր պարզած էին և զրահաւորին ետեւի կողմը յատուկ շրջանակներով պաշտպանուած էր։

*** Թօքիոյէ կ'հեռագրեն թէ Ռուսերը չպիտի կրնան վերստին նաւահանգիստ մտցնել Սեվաստոփոլը եթէ վնասուած ըլլայ, զի նաւահանգստին ամէն նաւերն ալ փճացան։

ԼՈՆՏՈՆ, Դեկտ. 16.—Ճաբոնցիք Աղանեացան Մոգլեն ծովեզրին երկայնութեամբ ցամաքէն, բաղդատաբար հարթ տեղերէն, կ'յառաջանան դէպ ի Դայանքօու, Իցզչան և Անցուչան ամրոցները։ Այդ ճամբան թէեւ դժուար չէ, բայց տեղ տեղ գտնուող ամրութիւնները չափազանց հզօր են, և հողին սառած ըլլալուն պատճառաւ խրամներ փորելու աշխատութիւնք յամրաբար կ'կատարուին։ Դեկտ. 3ի զինադուլին ատեն, Բիգվանչանի արեւելեան կողմը գտնուող Ռուս և Ճաբոնցի սպաները բարեկամացան, իրարու ձեռք թօթուեցին, այցաքարտեր փոխանակեցին և իրարու կենաց խմեցին։ Խումբ խումբ լուսանկարուեցան։ Ռուս սպայ մը բերդաքաղաքին անառիկ ըլլալն հաստատելով ըսաւ. «Դուք վերջապէս պիտի առնէք զայն, բայց մենք ալ չպիտի թողունք զայն մինչեւ որ մնայ մէկն ողջ մնայ. մեզ մեղք պէտք եղածին չափ գինի, ուտելիք և ռազմանիւթ ունինք, այնչափ որ ձեզի ալ կրնանք տալ։» Ճաբոնական սպաները յարգալիր աքանչացումով կ'խօսին իրենց հետ յարաբերութեան մտնող Ռուս զօրքերու քաջութեան վրայ։

«ԱՍՔՕԼՍ» ՅԱԾԱՆԱՒԸ

ԼՈՆՏՈՆ, Դեկտ. 16.—Մօրնինկ Բօսթի Շանկայի թղթակիցը կ'հեռագրէ թէ Ասքօլտի հրամատարը կ'հերքէ Շանկայի նաւահանգստէն դուրս ելնելու մասին իրեն վերագրուած նպատակը։ Հրամատարը կը հաստատէ վեց հարիւր թօնօ ածուխ առած ըլլալը, բայց ատիկա սովորական պէտքերու գործածման համար է, կ'ըսէ։ Օրական վեց թօնօ ածուխ կ'սպառէ եղեր։

ՄՐ. ՉԷՄՊԸՐԼԷՆ ԵՒ ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ

ԼՈՆՏՈՆ, Դեկտ. 15. —Մր. Ճօզէֆ Չէմպըրլէն, նախկին գաղթային նախարարը, երկարատեւ բացակայութենէ մը ետք այսօր 4000 գործաւորներու առջեւ ճառ մը խօսելով, վերստին յուզեց մաքսերու խնդիրը։ Իր առաջուան առարկութիւնները կրկնելով ըսաւ թէ անմաքս առեւտուրի դրութիւնն այլ եւս անյարմար է Մեծն Բրիտանիոյ համար. պաշտպանութիւնն ու փոխադարձութիւնը կ'հաստատեն զայս։ Չէմպըրլէն անգամ մը եւս գիտել տուաւ թէ միւս ազգերու զարգացման պատճառը մաքսապաշտպան դրութիւնն ընդունելնին է։ Իր մաքսային դրութիւնն երբեք չաղքատացներ գործաւորները։ Անկարելի է որ գործաւորներն անմաքս առեւտուրով իրենց աշխատութեան ապահովութիւն ունենան։ Անգլիացի գործաւորներուն վիճակը գերման գործաւորներուն վիճակին հետ բաղդատելով, շուտով կ'տեսնուի այն առաւելութիւնը զոր ունեցան այս վերջինները Պիզմարք իշխանին ազդեցութեամբ ընդունուած գերմանական սակացոյցին շնորհիւ. ատով էր որ գերման գործաւորներուն վիճակն անգլիացի գործաւորաց վիճակէն շատ արագ և շատ առաւել բարւոքեցաւ։ Մր. Չէմպըրլէն պարսաւեց Նաեւ ազատ վաճառականութեան կուսակիցներուն ընդդիմադրութիւնն այն օրէնքին դէմ, զոր Դաշնիքը վերջերս առաջարկեց օտար երկիրներէ գաղթողներուն թիւը սահմանափակելու համար, աւելցնելով թէ այն գաղթականներուն մեծ մասը չարագործներ, հիւանդներ կամ յուսահատ աղքատներ են։ Մաքսային խնդիրն հարուստ մարդու խնդիր մը չէ, ըսաւ, ինչպէս կ'կարծեն ընդդիմադիրք. անիկա գործաւորներուն կեանքի խնդիրն է։ Մր. Չէմպըրլէն վստահացուց թէ իր ծրագիրն ընդունելով, գործաւորաց դասն հիմակուընէ աւելի գործ պիտի գտնէ աշխատելու։ Իսկ գալով Անգլ. գաղթականութեանց, ըսաւ որ եթէ Անգլիա անտեսէ գաղթականութեանց կողմէ ընծայուած նախամեծարութիւնն, ուրիշ ազգեր պատրաստ են Անգլիոյ տեղը բռնելու։ Ըսուեցաւ թէ ժողովուրդը չի հաւատար իր գուշակութեանց, և թէ ինքն ալ վհատած է այլեւս։ Ինք չուզեր առ այժմ ըսել թէ յառաջիկայ ընտրութեանց մէջ ազատական կուսակցութիւնն յաղթական պիտի ելնէ՞ թէ ոչ, բայց սա՛ կ'փութայ ըսել թէ ինչ որ ալ ըլլայ, մաքսային այս խնդիրն երբեք չպիտի կորսնցնէ իր այժմէութիւնը։

ԼՈՆՏՈՆ, Դեկտ. 16. — Լոնտոնի առաւօտեան թերթերն իրենց քաղաքական կուսակցութեան տեսակէտներով կ'խօսին Չէմպըրլէնի ճառին վրայ։ Սթանտըրտ որ մինչեւ նոր վարչութեան տակ մտնելը ջերմ կուսակից էր անմաքս վաճառականութեան, այժմ մաքսապաշտպանութեան դրօշ կ'պարզէ։

(Նոյէ Ֆրայէ Բրէսէ, Դեկտ. 17)

ՍԱԿԱՐԱՆ ՂԱԼԱԹԻՈՅ

ՓԱԿՈՒՄ

Օսմանեան Միացեալ	Օ. Ո.	94 21
Ամենէն բարձր գին	»	94 34
Ամենէն վար գին	»	94 19
Րումելիի Երկաթուղի	Ֆր.	124 37½
Ամենէն բարձր գին	»	125 75
Ամենէն վար գին	»	124 37½
Թրամուայ	»	108 —

ՓԱՑՈՒՄ, 6 Դեկտ.

Օսմանեան Միացեալ	Օ. Ո.	94 29
» »	ժամ 6ին	94 27
Րումելիի Երկաթուղի	Ֆր.	124 50
» »	ժամ 6ին	124 50
Հայտարփաշայի երկաթուղի	Ֆր.	441 —
» Նոր »	» Բ. Օ. Ո.	3 85
Իզմիրի բաժնեթուղթ	Օ. Ո.	15 37½
Եգիպ. Քրէտի Ֆոնսիէ Ա.	Ֆր.	292 50
» » Բ.	»	268 50
Քարափ Կ. Պոլսոյ	»	513 50
Անատօլուի Երկթ. պարտ.	»	526 —
» « բժնթ.	Ա. Ո.	12 50
Օսմ. Ապահովագր. Ընկ.	Օ. Ո.	4 02½
Թրամուայի բաժնեթ.	Ղշ.	625 —
» հիմնադիր	»	210 —
» պարտամ.	Ֆր.	494 —
Տէրքոս Ջուրի Ընկ.	»	248 —
[illegible] 5% 1881	Ֆր.	240 —
Բաժնեթուղթ Լաւրիոնի	»	56 50
Թրամուայ	»	104 —
Քարափ Իզմիրի	»	575 —
Գարասու		72 —

ՍՓԻԼԱՆՑ

Փոխանակ մէկ օրուան	Օ. Ո.	2.75	2.25
» եօթ օրուան	»	6.75	—
Րումելիի Երկթղ. »	Ֆր.	1.50	—

ՕՍՄ. ԳԱՆՁԱՐԱՆԻ ՓՈԽԱՆԱԿԱԳՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

	ՎԱՃԱՌՈՒՄ	ԳՆՈՒՄ
Լոնտոն 3 ամիս	110 37½	109 37½
» չէք	110 17½	1[illegible]9 37
Փարիզ 3 ամիս	22 67½	22 87½
» չէք	22 77½	22 87
Պերլին մարք	18 45	18 55
Վիեննա քուրոն	21 69	21 79

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Անգլիական ոսկի	Ղշ.	1[illegible]9 39
20 ֆրանքնոց	»	87 18
20 մարքնոց	»	107 [illegible]0
Բօլ Էմփէրիալ	»	89 3[illegible]
Ֆլորին	»	51 04
Մէճիտիյէ արծաթ	»	108 10
Պէշլիք	»	104 05
Նոր Մէթալիք	»	102 —
Րուպլ թղթադրամ	»	8 60

Անդէկ Ա. Անտրէասեան, Ղալաթ.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆՔ

ԼՈՆՏՈՆ, Դեկտ. 17

Օսմանեան Միացեալ բաց.		Ա. Ո	86 25
» » գոց.		»	86 —
Օսմ. Կայս. Պանքա		»	13 50
Եգիպտական Միացեալ		»	104 50
Անգլ. Քօնսոլիտէ		»	88 37
Փոխառութիւն Դաիրա		»	90 50
Պուլկ. Փոխառ.	1888	»	96 50
» » Նոր	1892	»	97 25
Հելլենական Ռենդ	1881	»	37 —
» Մօնօբոլ		»	48 25
Փոխան. Բարիզի վրայ		»	25 32½
Թրանսվալ		»	4 25
Ճաբոնական 4%		»	76 12
Ռուսական			93 —
Դրամազեղչ		»	3 —

ՓԱՐԻԶ, Դեկտ. 17

Օսմանեան Միացեալ բաց.		87 40
» գոց.		87 55
Րումելիի Երկաթուղի	Ֆր.	126 75
Օսմ. Կայս. Պանքա	»	591 —
Օսմ. Մաքս. Նոր Փոխառ. 4%	»	475
Իզմիրի բաժնեթուղթ	»	354 —
Պանք տը Սալօնիք		180 —
Պալիա Գարայտըն	»	408 —
Ֆրանս. Ռանթ 3% Գ. Կ.	»	97 32
Քրէտի Լիոնէ	»	1158 —
Պանք տը Բարի	»	1261 —
Սպանիական արտաքին	»	89 95
Իտալական Ռանթ	»	1[illegible]5 10
Ռուսական		90 20
Թրամուայ	»	108 50
Չէք Լոնտոնի վրայ	»	25 15
Դրամազեղչ Ֆրանս. Պանքայի		3 —

ՎԻԵՆՆԱ, Դեկտ. 17

Փոխան. Բարիզի վրայ	քուրոն	95 25
» Լոնտոնի վրայ	»	239 4[illegible]
Րումելիի Երկաթուղի	»	131 75
Օսմ. Լօթէ	»	332 —
Դրամազեղչ		3½

ՊԵՐԼԻՆ, Դեկտ. 17

Օսմ. Միացեալ		85 —
Անատօլուի Երկ. պարտամ.	մարք	103 20
» » բաժնեթ. 60%	»	100 30
Ռուսական 4%	»	91 25
Րումելիի Երկաթուղի	»	127 90
Փոխ. Լոնտոնի վրայ 3 ամսը.	»	20 21
Չինական փոխառութիւն 1903		87 60
Դրամազեղչ		4 —

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՈՆԿՐՈՒԱԶ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆՑ

ՀԻՄՆԵԱԼ 1857 ԻՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿՈՎ. Ի ՊՈՒՏԱՊԵՍԹ

ԿԵՆԱՑ ԲԱԺԻՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԵԱԼՆԵՐՈՒ ՎՃԱՐՈՒԱԾ 332,000,000 ՖՐԱՆՔ — ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳՈՒՄԱՐ 129,000,000 ՖՐԱՆՔ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ ի դէպ մահու և կենաց՝ շահաբաժնի մասնակցութեամբ և երաշխաւորեալ տոկոսի աւելցմամբ, որպէս նաև ուղղակի փրկածին ու հաճոյ դրամագլխի կազմութեան, և զանազան դիւրին զեղչերու(?)։
Բացարձակ կերպով կ'յայտարարենք որ Թուրքիոյ մէջ ներկայացուած ապահովագրական ընկերութիւններէն և ոչ մին է վիճակ(?) մրցելու Ընկերութեանս հետ սա պարզ պատճառաւ որ, Ընկերութեանս պայմաններն ամենէն աւելի նպաստաւոր ըլլալով հանդերձ [illegible] ալ [illegible] են։

ԿԱՐԺԷ ՈՒՐԵՄՆ ԱՅԼՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԵԼԷ ԱՌԱՋ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՍ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԱՆԳԱՄ ՄԸ ԱԶԴԷ ԱՆՑԸՆԵԼ, ԳԷԹ ԳԱՂԱՓԱՐ ՄԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՅՍ ՄԱՍԻՆ։

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար, դիմել Ընկերութեան Ընդհանուր Գործակալութեան։

Դեր Գործակալութիւն՝ Գալաթիա Խանի թիւ 5.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՍ ԴՐԱՄԱՏՈՒՆՆ Է ՕՍՄ. ԿԱՅՍ. ԲԱՆՔԱՆ

Գաւառներու համար գործակալներ կ'փնտռուին։

Ընդհ. Գործակալը բովանդակ Թուրքիոյ
ՈՐԴԻՔ Ն. ՊԱՌՆԱԴԵԱՆԻ
ՊԱՌՆԱԹԱՆ ԽԱՆ Կ. ՊՈԼԻՍ 50—20

ՀԱՆՐ. ՊԱՐՏՈՒՑ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱԶԴ.— Հանրային Պարտուց Վարչական Խորհուրդը կ'ծանուցանէ Օսմ. Հանրային պարտամուրհակ ունեցողներուն թէ 1881 Դեկտեմբեր 8/20ի Կայս. Հրովարտակին Ե. հատուածին 5րդ. յօդուածին տրամադրութեան համաձայն ընդունուած պիտի նկատուին այն բոլոր կտրոնները, որոնք չեն գանձուած իրենց պայմանաժամին սկսեալ մինչեւ վեց տարի։

Հետեւաբար 31 թիւ կտրոնները, որոնց պայմանաժամն սահմանուած է 1899 Մարտ 1/13ին Հանրային Պարտուց Վարչութեան պիտի մնան, եթէ գանձուած չըլլան մինչեւ 1905 Փետր. 28/13 Մարտ։

Կ. Պոլիս, 18/1 Դեկտ. 1904 14-4

⁂ Օսմ. Հանր. Պարտուց Վարչ. Խորհուրդը կ'ծանուցանէ 4% Բրիօրիդէ պարտամուրհակ ունեցողներուն թէ 1890 Ապրիլ 15/27ի Կայս. Հրովարտակին ԺԴ. յօդուածին համաձայն, ընդունուած պիտի նկատուին այն բոլոր կտրոններն որոնք գանձուած չեն իրենց պայմանաժամէն սկսեալ մինչեւ վեց տարի։


Հետեւաբար, նոյն պարտամուրհակներուն թիւ 17 կտրոնները, որոնց պայմանաժամն սահմանուած է 1899 Մարտ 1/13ին, Հանրային Պարտուց Վարչութեան պիտի մնան, եթէ գանձուած չըլլան մինչեւ 1905 Փետր. 28/13 Մարտ։

Կ. Պոլիս, 18/1 Դեկտ. 1904 14-4

ԼԱ ՊԱԼՈՒԱԶ

ՀԻՄՆԵԱԼ 1863 ԻՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ
Ի ՊԱԼ (ԶՈՒԻՑԵՐԻԱ)

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ 15,243,000 ՖՐ
ՎՃԱՐԵԱԼ ԳՈՒՄԱՐ 113,000,000 ՖՐ.



Այս ընկերութիւնն ապահովագրութիւններ կ'ընդունի հրդեհի, կայծի և շոգեկից կաթսաներու պայթման, անշարժ ստացուածքներու, և ամէն տեսակ կարասիի և վաճառքի վրայ։

Ընկերութեան փոխանորդն
ԲՐԷՏԻ ԼԻՈՆԷ է Պոլ.
Ընդհանուր [illegible] է Պոլ.
ԳՐԻԳՈՐԵԱՆ ԵՂԲ.
Պոլիս Ալալէմճի Խան, թիւ 16—18
100—34

Vin Désiles

ՏԷԶԻԼԻ ԳԻՆԻ



ԱՄԵՆԷՆ ԶՕՐԱՒՈՐ ԴԵՂԸ
ԱՆԱՐԻՒՆՈՒԹԵԱՆ
ՋՂԱՅՆՈՒԹԵԱՆ
ԱՊԱՔԻՆՄԱՆ

Կ'գտնուի բոլոր գլխաւոր դեղարաններուն մէջ։ 50—22

ԽԱՋԻՆԷԼԻ ԽԱՍՍԱՐ ՇԱՀԱՆԷ

Խաջինէլի Խասսար Շահանէնէ միւպայեա օլունմաճագ թուզլա վէ մէրմէր քիրէճի վէ սաիրէ մա'ը հալըն 6 ընճը բազար իրթէսի կիւնի 100 տէ 3 թէնզիլի պիլ զաւոլ իհալէի գաթիէսի իճրա գըլընաճաղընտան իթթայա թալիպ օլանլարըն թէմինաթ ագչէսինի վէ եա միւթէպէր քէֆալէթնամէի միւսթաաճըպէն նէզտը մէզքիւրտէ նիհայէթ սաաթ 10 ա գատար Խաջինէի ճէլիլէի միւշարիլէյհայա կէլմէլէրի իլան օլունուր։

2 Բեանունի էվվէլ 320 3—2

ՊԱՅՄԱՆՔ "ԲԻՒԶԱՆԴԻՈՆ"Ի

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ	6	Մէճ.
ՎԵՑԱՄՍԵԱՅ »	3	»
ԵՌԱՄՍԵԱՅ »	1½	»
ԶԵՌՔԷ ԳՆՈՂՆԵՐՈՒՆ	20	ՓՐ.
ԱՄՍԱԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ ԲՈՍԴ—ԼՕՔԱԼՈՎ	12	ՂՏ.
ՏԱՐԵԿԱՆ » » »	7	Մէճ.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ	26	ՖՐ.
» ՎԵՑԱՄՍ. 13, ԵՌԱՄՍ.	9	»
» ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՏ ԹՈՒՂԹՈՎ և ամենօրեայ ճշդութեամբ	40	»

Անգլ. Լիրան 119 ղր.—20 ֆր.ոսկի 94½. —Բէշլիկն 55 ղր.էն փոքր կ'ընդունուի։

Նոյն պայմանք Կ. Պոլսոյ և Գաւառի համար ԱՆԽՏԻՐ։ ՄԻՇՏ ԿԱՆԽԻԿ

Նամակի փոխ կ'ընդունինք՝ 20 հատ 1 ղրշ.նոց բօստայի փուլը 20 ղրշ.ի հաշուով, և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿՈՎ։

Հասցէի փոփոխման համար անհրաժեշտ է ղրկել երկու ղրշ., նամակի փուլով։

Բօսդայի ծախքը մեր վրայ է, Բօսդ—լօքալէն զատ։ Իսկ դրամին առաքման ծախքն և ամէրոյի տարբերութիւնն առաքողին վրայ են։

Չէքերուն և Փօս'' գրերուն վրայ, պէտք է որ առաքողն ինք փակցուցած ըլլայ 20 փարայի օրինական դրոշմը։

Նմանապէս, մայրաքաղաքէն կամ գաւառէն ղրկուած Ազդերը պէտք է դրոշմուած ըլլան ըստ օրէնի։ Եկեղեցական ու բարեգործական Ծանուցումները զերծ են դրոշմի տուրքէն։

Պոլսոյ և գաւառի մէջ, ա'ն վճարումները միայն վաւերական են որք կ'ըլլան ի փոխարէն Տպարանին պաշտօնական թղթին՝ ստորագրուած Տնօրէնէն, ու կնքուած Լրագրին սեփական կնիքովը։

Պակաս թերթ կ'ղրկուի անոնց որ վերջացելէն տարբեր սակով հաշուած ըլլան իրենց ղրկած դրամը։

Բաժանորդ գրուելու և դրամը ղրկելու ամէնէն դիւրին կերպն է՝ մանտա—բօստ մը առնել, որուն բոլոր ծախքն է 20 փարա մինչեւ 100 ղրշ.։ Նամակ գրելու պէտք չկայ։ Բաւ է մանտա—բօստին կտրօնին ետեւին նշանակել բաժանորդին անունը, հասցէն, թուականն ու գումարը։ Դրամը մեզ կը հասնի, և թերթը կ'ղրկուի, անվրէպ։

Ապառիկ յանձնարարութիւնք ՉԵՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԻՐ։ Չնորոգուած բաժանորդութիւնք ՕՐՆ ՕՐԻՆ կ'դադրին։

Հին թիւերը սովորական գնով չեն ծախուիր։

Չտպուած ձեռագիրներն ետ չեն տրուիր։

ՆԱՄԱԿԻ 40ՆՈՑ ԿԱՄ 20ՆՈՑ ԲՈՒԼ — և ո'չ թէ Սէնէտի կամ Իմզա—բուլի բուլ— ղրկել կ'խնդրուի անոնցմէ որք փոքր գումարներու համար Նախամեծար կ'սեպեն տակաւին բուլ ղրկել ապահովագրել Նամակով։ Բօսդահանէի բուլէն զատ ուրիշ բուլեր [illegible] կը ծախուին, և տարբերութիւնն առաքողը կ'տուժէ ի հարկէ։

ՍԻՆԿԷՐ

ՀԱՑԹԱՑԹԻՉ ԿԱՑՍ. ՊԱԼԱՏԱՆ
THE SINGER MANUFACTURING Cº



Սինկէրի կարի մեքենաները զօրաւոր [illegible] ըլլալով, իրենց տոկունութեամբ [illegible] գնահատուած են որ ուրիշներու ամէն կազմը [illegible], և բոլոր մրցանակները, գերազանց ու [illegible] Սինկէրի մեքենայ [illegible]։ Սինկէրի Ընկ. [illegible] գործ 400 է [illegible] և [illegible] ուած է բոլոր [illegible] մէջ։

Մասնաճիւղեր բովանդակ Թուրքիոյ մէջ
Սինկէրի մեքենաները կ'վաճառուին՝ Պերա, Շիշլի, Ղալաթիա, Սէրայի [illegible]։

Պերա) Շէրաքի Գրան—Մաղլէի գիծով թիւ 343 և 343 [illegible].
Ղալաթիա) Սինկէր Խան, Բիւնէլին [illegible].
) Թռամվայի [illegible] գիծով.
Ստամպոլ) Սուլթան Համամ թիւ 2.
) Սուլթան Պայազիտ [illegible] թիւ 12
Սկիւտար, Չարշի Պոյու, թիւ 120.

Կեղծերէն զգուշանալու համար վերի նշանին ուշադրութիւն ընելու է [illegible] Ընկերութեան [illegible] Պերա, Շիշլի [illegible] թիւ 343 և 343 [illegible], Սուլթան Համամ [illegible]։ 50—32

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՋԵՐՄԱՄԻԶՈՒԹԻՒՆՆ
ԵՒ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՍՈՒՄՆԵՐԸ ԿԸ ԲՈՒԺԷ
ՍԱՆԹԱԼ ՔԼԷՆ

[illegible] օրուան մէջ օրական 8—12 հատ [illegible]

ԲԻԼԻՒԼ ՄՈՒՍԷԹ
[illegible]
[illegible] ԲՈՐԲՈՔՈՒՄՆԵՐԸ
[illegible]

ՀԱՋԸ
ԱՊՐՈՒՆՔ, ԽՋՈՒԱՄՔԸ
[illegible]
ԿԸ ԲՈՒԺԷ
ՍԻՐՕ Տ'ՕՊԷՐԺԻԷ

Կը ծախուի Բարիզ թիւ 8 և [illegible] Կ. Պոլսոյ ու գաւառներու դեղարաններու և դեղավաճառանոցներու մէջ։

ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ
ԱՄԵՆԷՆ ԱԶԴԵՑԻԿ ԴԱՐՄԱՆԸ

Ամէն մարդ գիտէ որ ջղային հիւանդութիւնները կը ծնին գլխաւորաբար մարմնի ու մտքի չարաչար աշխատութենէ, յոգնութենէ, հիւծումէ և ամէն կարգի զեղծումներէ։ Ջղային հիւանդութիւնները բուժելու համար մինչեւ ցարդ հնարուած դեղերն անբաւական եղած են իրենցմէ սպասուած արդիւնքն արտայայտելու, անոր համար որ վերոյիշեալ դեղերը ջիղերուն բնական ոյժը չէր կրոնցնելու նպատակով միայն պատրաստուած են։ Բարիզի առաջնակարգ բրոֆէսէօրներէն Պ. ԲՐԻՒՆԻԷ, վերջին տարիներս հնարած է դեղ մը ՆԷՕՐՕՃԻՆ ԲՐԻՒՆԻԷ անուամբ, որ ոչ միայն տկարացած ջիղերը կը զօրացնէ, այլ բնական ոյժէն զատ նոր ոյժ կուտայ անոնց, որովհետեւ ինչ նիւթերէ որ կազմուած են ջիղերը, ճիշտ մի և նոյն նիւթերով բաղադրուած է այս ՆԷՕՐՕՃԻՆ ԲՐԻՒՆԻԷն, Երիտասարդական կորով ստանալու եւ ջիղերուն ինչ [illegible] զօրացած ըլլալու համար, կը բաւէ փորձ մը ընել այս դեղէն։

Կէս գլխու ցաւը, ջղային հազը, երեսի ջիղերուն ցաւերը, անքնութիւնը, ջղային տկարութիւնը, [illegible], [illegible] կարգի հիւանդութիւնները հիմնապէս կը բժշկուին ՆԷՕՐՕՃԻՆ ԲՐԻՒՆԻԷով, որ կը ծախուի Կ. Պոլսոյ և գաւառներու դեղարաններուն ու դեղավաճառանոցներուն մէջ։ 50—3

ԲԵՏԵՐՍԲՈՒՐԿ ԵՌԱՆԿԻՒՆ ՄԱՐՔԱՅՈՎ
ՌՈՒՍԱԿԱՆ ՃՇՄԱՐԻՏ ԼԱՍԹԻՔՆԵՐԸ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԳՆԵՑԷՔ



Իրենց տոկունութեամբ և ազնուութեամբ ռուսական լասթիք կալօշներուն գտած ընդունելութիւնը պատճառ եղած է որ շատ մը կեղծեր ողողեն հրապարակը։ Խանութպաններէ ոմանք ալ օգտուելով յաճախորդներու անգիտութենէն, երբ ռուսական ճշմարիտ լասթիք՝ միևնոյն գնով կ'կլլեցնեն այս կեղծերը հասարակութեան։ Հետեւաբար ռուսական ճշմարիտ լասթիք գնելու համար պէտք է ուշադրութիւն ընել լասթիքներու տակի եռանկիւն մարքային, որուն մէջ պէտք է գրուած ըլլայ 1860 թուականն և ՍԷՆ ԲԵՏԵՐՍԲՈՒՐԿ բառը ռուսերէն լեզուով։ Ռուսական ճշմարիտ լասթիքներուն կեղծերէն ունեցած գլխաւոր տարբերութիւնն եռանկիւն մարքային այս պարունակութիւնն է. հետեւաբար կը խնդրեմ որ խանութպաններէն այս մարքան պահանջէք։

Օսմ. երկիրներու համար
միակ ներկայացուցիչ
Մ. Ժ. ՄԷՐՃԱՆՕՖ
25—17

ԼԱ ՆԻՒ-ԵՈՐՔ

ԱՄԵՆԱՀԻՆ ԵՒ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Զատ [illegible] հիմնեալ 1845 ին

1902 Յունուար 1 ին երաշխաւորեալ գոյքն՝ ֆր. 1,506,000,000.

1901ին ապահովագրեալներուն եղած փոխատուութիւնք՝ ֆր. 34,000,000.

ԼԱ ՆԻՒ—ԵՈՐՔ 600,000 էն աւելի ապահովագրեալ ունի, որք կ'կազմեն Ընկերութիւնը, և որոց կ'պատկանի բոլոր շահերն։ 1901ին ապահովագրելոց վճարուած շահաբաժիններու գումարը՝ ֆր. 17,500,000։

ԼԱ ՆԻՒ—ԵՈՐՔԻ տեխնիքական բոլիսը մինչեւ հիմա ուրիշ որ և է ընկերութենէ մը յանձնուած բոլիսներէն աւելի անկաշկանդ և շահաւոր պայմաններ պարունակող է. յանձնուած օրէ, անվիճելի է. ըլլայ զբաղման, բնակութեան, ճամբորդութեան, անձնասպանութեան և մինչեւ իսկ պատերազմի առթիւ։ Տեխնիքական բոլիսը կ'երաշխաւորէ փոխատուութիւններ երեք տարի ետք ապահովագրին վճարելէ յետոյ [illegible] փոխատուութեանց գումարներն նշանակուած են բոլիսին մէջ. 30 օր պայմանաժամ բաժանորդի վճարման համար առանց տոկոսի, վճարումները դադրեցնելէ մինչեւ 5 տարի վերստին շարունակելու [illegible] ապահովագիրները 5 առ 100 տոկոսով հանդերձ վճարելով, մէկ տարեվճար ընելէ յետոյ իրաւունք կորսուած չկայ։ Ապահովագրութեան երկարաձգումը բոլիսին մէջ նշանակուած ժամանակամիջոցի մը համար, այնպէս որ յիշեալ ժամանակամիջոցին մէջ եթէ մահ պատահի, ապահովագրեալ գումարը կը հատուցուի ամբողջութեամբ. [illegible] ապահովագիրները։

ԼԱ ՆԻՒ—ԵՈՐՔ 4 առ 100 տոկոս [illegible], որ [illegible] պայմաններէն ամէնէն աւելի նպաստաւորն է, աւելի մանրամասնութեանց համար դիմել

Տնօրէնութիւն ի Թուրքիա
Ճ. ՌԻ. ՀՈՒԻԹՕԼ ԵՒ ԸՆԿ
[illegible]
Ա. ՉՈՒՀԱՃԵԱՆ
Պոլիս, [illegible]
Վալիտէ [illegible] Ղալաթիա 50—7

ՄԻ ՋԱՆՁՐԱՆԱՔ

ԱՇՆԱՆ ԿԱՄ ՁՄԵՌՈՒԱՆ
ԵՐԿԱՐ ԳԻՇԵՐՆԵՐԸ

Այլ ընտրեցէք [illegible]

ԺԱՄԱՆՑ
ԿԱՄ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽԱՂԵՐ

Զ. Յ. Ս. ՓԱՓԱԶԵԱՆԻ
որ հրատարակուած է և կ'ծախուի
5 ՂՐՈՒՇԻ

Մի' ըսէք այլեւս թէ գիշերներն երկարեցան. Ի՞նչպէս ժամանակ պիտի անցընենք։

Առէ'ք ԺԱՄԱՆՑ մը և կրնաք ամբողջ ձմեռը զուարճանալ և զուարճացնել ձեր հիւրերը։

Անհրաժեշտ ամէն մարդու, անհրաժեշտ ամէն ընտանիքի։

Կ'գտնուի բոլոր գրավաճառներու եւ հեղինակին քով, Կ. Պոլիս, Պալըք Բազար։
25—21

ԴՐԱՄ ԹԷ ՊԱՏԻՒ

(132)

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ

Ժ.— ԿՈՅՐԻ ՄԸ ԱԿԱՆՋԸ

Այս վերջինն նստած աթոռին վրայէն ելաւ, բարեւեց քաղաքավարութեամբ և այցելուին թիկնաթոռ մը ցոյց տուաւ։

—Մ. Լավեռտաք, ըսաւ ուղղակի Ռիվաս, կուգամ ձեր աղջկան մասին խօսիլ ձեզի հետ... ձեզի իր մասին շատ փափուկ առաջարկութիւն մը պիտի ընեմ...։

Կոյրն ամենամեծ լրջութեամբ պատասխանեց.

—Արդեօք զինքն ամուսնութեա՞ն պիտի ուզէք, տիար. կ'խոստովանիմ որ այդ պատուին չէի սպասեր։

Ռիվաս պատասխանեց.

—Ես գիտեմ թէ ծերացած եմ, և ձեր զաւակը կեանքի արշալոյսին մէջ է միայն... դուք տեսողութենէ զրկուած էք և հետեւաբար մեր տարիքներուն տարբերութիւնը չէք կրցած նշմարել։

—Ձենէ ներողութիւն կ'խնդրեմ, տիար, բայց երբ ըսիք որ աղջկանս համար փափուկ խնդրի մը մասին պիտի խօսէիք հետս, այդ մտածումը բնականաբար առաջինն էր որ միտքս եկաւ... մտիկ կ'ընեմ ձեզ։

—Մ. Լավեռտաք, հարուստ եմ։

—Գիտեմ։

—Այն կարճ վայրկեաններուն միջոցին ուր Օրիորդ Սէսիլը տեսնելու բախտն ունեցայ, վրաս շատ նպաստաւոր տպաւորութիւն մ'ըրաւ և իրեն համար շատ անկեղծ հետաքրքրութիւն մ'ունեցայ... կը ներէ՞ք եթէ ըսեմ որ ինծի այնպէս թուեցաւ որ ձեր մօտ իր անցուցած կեանքը ճիշտ ու ճիշտ այն կեանքը չէ որու արժանի էր իր երիտասարդութեամբը, անմեղութեամբն և գեղեցկութեամբը։

—Ատիկա գնահատութիւն մ'է, տիար, և այն տեսակ գնահատութիւն մը որ ինչո՞ւ ծածկեմ ձենէ, զիս քիչ մը կ'զարմացնէ։

Ժօռժ Տոմնէլի բարեկամն հաստատ ձայնով մը շարունակեց.

—Ձեր աղջիկն ամենայն անկեղծութեամբ ինծի պատմեց թէ ինչ պատահեցաւ երբ իրեն հետ մեր տունն եկաք։

—Անզգուշութիւն էր ըրածը... զիս կ'վշտացնէ այդ բանը, և զինքը պիտի յանդիմանեմ։

—Ինծի ըսաւ նաեւ, շարունակեց Մեքսիկացին, թէ ինչպէս այդ ապարանջանն որու համար անարդար կասկածի մը անարգանքը կրեց, իր տուփէն հանուած էր։ Յայտարարութեան անկեղծութեան և ինքնաբուխութեան համար է որ այդ գործը չունեցաւ այն հետեւանքները զորս կրնար ունենալ։

Կոյրն ուսերը ցնցեց և հեգնական շեշտով մ'ըսաւ.

—Պարոն, գոհարներու շատ սիրահար եմ կամ էի ժամանակաւ... ձեզի սպասած ատենս ձեռքս այդ գոհարին հանդիպեցաւ և մեքենաբար զայն շօշափեցի... հետաքրքրութիւնս թերեւս չափազանց էր, բայց յանցաւոր չէր... աղջիկս սխալեցաւ իմ նպատակիս վրայ և բաւական ծիծաղելի կռիւ մը կ'ընէր հետս երբ դուք ներս մտաք... եթէ ձեզի կրցաւ ըսել թէ իր հայրը կարող կ'գտնէր գող մ'ըլլալու, շատ տարօրինակ կերպով երախտագիտութիւնն յայտներ է իմ ըրած բոլոր զոհողութիւններուս համար։

—Մ. Լավեռտաք, ըսաւ կտրուկ ձայնով մը այցելուն, շատ ժամանակ չունիմ կորսնցնելիք, ինչպէս դուք ալ, կարծեմ... Ուրեմն նիւթէն չշեղինք և ուղղակի անոր վրայ խօսինք։

—Լա՛ւ. Ամերիկայէն կուգաք, կարծեմ նոյն իսկ անտեղացի էք, և կ'ուզէք ձեր հայրենակիցներուն գործադրած կարճ միջոցներուն հետեւիլ... Ատիկա չի կրնար հաճելի ըլլալ ինծի... Ուրեմն ուղղակի նիւթին վրայ խօսինք, ինչպէս որ կ'բաղձաք։

—Կուգամ խնդրել ձենէ որ աղջիկնիդ ինծի վստահիք։

—Ա՛հ... լա՛ւ ուրեմն, տիար, ես ալ իմ կարգիս ձեզի պիտի հարցնեմ թէ այդ տեսակ առաջարկութիւն մ'ընելով ի՞նչ է նպատակնիդ և թէ ինչ ընել կ'ուզէք իմ զաւակս։

—Կ'ուզեմ զինքը նուազ վտանգաւոր միջավայրի մը մէջ ապրեցնել։ Իրեն հիմակուհիմա պատուաւոր կեանք մ'ապահովցնել և ետքն ալ օգնել որ պատուաւոր մարդու մը հետ կարգուի։

—Մ. Ժօ'զէ Ռիվաս, պատասխանեց շատ պարզ է, ըսաւ Լավեռտաք քիչ մը կտրուկ շեշտով մը... Աղջիկս կատարեալ կրթութիւն մ'ստացած է, և չեմ գիտեր թէ ինչո՞ւ համար իմ տանս մէջ մնալով այդ բախտին չպիտի արժանանայ։

Բայց Սէսիլի պաշտպանն իր խօսակցին այդ շեշտէն ազդուող և յուսահատող մարդ չէր։ Ուստի և պաղարիւնութեամբ շարունակեց.

—Բնական է որ, տիար, ձեզի պիտի տամ բոլոր այն փոխարինութիւններն զոր կրնաք ինէ պահանջել։

Կոյրը վայրագօրէն պատասխանեց.

—Մէկ բառով, մի'շտ ամերիկեան դրութեամբ գործելով, կուզէք իմ զաւակս գնելու... լա'ւ ուրեմն, կ'մերժեմ։

—Ուրեմն չէ՞ք ուզեր որ երջանիկ ըլլայ անիկա։

—Կրնայ ինձմով երջանիկ ըլլալ և ինծի հետ։

—Վստա՞հ էք։

—Ամէն պարագայի մէջ, չեմ գիտեր թէ ի՞նչպէս վստահ պիտի ըլլամ որ այդ ենթադրական երջանկութիւնը պիտի գտնէ օր մ'առաջ չճանչցած օտարականներուն հետ։

—Դո՛ւք ալ խոստովանեցաք, Մ. Լավեռտաք, թէ հարուստ չէք...

—Կարծեմ իմաստունն ըսած է որ հարստութիւնը երջանիկ չըներ մարդը, ըսաւ Միշէլ, թողէք որ հակառակ աղքատութեանս տակաւին մուրալու վիճակի մէջ չեմ։ Ուստի և Սէսիլէն չպիտի բաժնուիմ։

—Կ'ընդունիմ, ըսաւ Մեքսիկացին պաղարեամբ, որ ձեզի շատ օգտակար է քանի որ ձեր քայլերն ուղղելու կ'ծառայէ ձեզի։ Ներեցէք սակայն որ դիտել տամ ձեզի թէ դիւրաւ մէկը կրնաք գտնել անոր տեղը բռնելու համար։

—Մեր հին աշխարհին մէջ զգացումը տակաւին իրաւունքներ ունի, և սիրուած զաւակի մը տեղ ուրիշ մէկը չեն գներ, որքան որ ալ անիրաւ գտնուած ըլլայ ձեզի հանդէպ։

—Եթէ աղջիկնիդ այդքան շատ կը պաշտէք, պէտք է անոր ապագային վրայ խորհիք, քիչ մ'առաջ ակնարկած ամուսնութեանս։ Ի՞նչ օժիտ պիտի տաք ձեր աղջկան։

—Այդ նպատակաւ դրամ կ'խնայեմ արդէն։

—Ձեր արհեստը շատ մասնաւոր բան մ'է, և շատ կասկածելի։

—Ա՛հ, բաւ է տեղեկութիւններ առեր էք, ըսաւ կծու շեշտով մը կոյրը։

—Այո՛։ Ձեր վրայ ամէն բան գիտեմ, և ատոր համար է որ կ'կարծեմ համարձակութիւնն ունենալ ձեզի առաջարկելու ձեր աղջկան երջանկութիւնն որու կ'սպառնան կեանքի բոլոր վտանգները, պատասխանեց Ռիվաս։

—Դո՛ւք էք որ կ'ըսէք ատիկա։ Բայց ինչպէս ունենամ այդ վստահութիւնը։ Չեմ գիտեր թէ ի՛նչ կեանք պիտի անցընէ ձեր տունը։

—Իմ աղջկանս անցուցած կեանքը։

—Տիար մարդասէր, հոս սանկ իբր էրիկ մարդ խօսինք։ Աղջիկս գեղեցիկ է, անբիծ է, ու քսան տարեկան է։ Պէ՞տք է ըսել ձեզի թէ Բարիզի մէջ և նոյն իսկ Բարիզէ դուրս ալ, անանկ միլիոնատէրներ կան որ իրենց քմահաճոյքներն և կիրքերը գոհացնելու համար ո'չ մէկ վըճարումի առջեւ կ'ընկրկին։

—Ա՛հ, տիար, ըսաւ Ռիվաս բարկացած, անկեղծօրէն կ'ցաւիմ վրանիդ այդ տեսակ մտածումներ ունենալնուդ համար։ Մարդ պէտք է շատ մը աղտոտութիւններ գործելու կարող ըլլայ ուրիշներէն այդ տեսակ հրէշութիւններ յուսալու համար։

Ժօզէ Ռիվասի սովորաբար քաղցր և լուրջ ձայնն յանկարծ հնչուն և թրթռուն ձայն մ'եղած էր։ Զգացած բարկութիւնն իրեն բարձր խօսեցնել կուտար, առանց նեղուելու և առանց սեղմումի։ Լավեռտաք յանկարծ սարսռաց. արագ շարժումով մը գլուխն այցելուին կողմը դարձուց, ու ականջ տնկեց որպէս թէ տարօրինակ բան մը լսած ըլլար։ Ժօռժ Տոմնէլի բարեկամն այդ շարժումը չնշմարեց. սակայն կարծես զղջաց սովորական հանդարտութիւնը մէկ կողմ թողած ըլլալուն և յուզմամբ շարունակեց.

—Ճշմարիտ պատճառն իմ հոս ըրած դիմումիս՝ հետեւեալն է. կ'կարծեմ որ ձեր աղջիկը դժբախտ է ձեզի հետ, և ամէն տեսակ դժբախտներով կ'հետաքրքրուիմ, ինչ տեսակ ալ ըլլայ իրենց դժբախտութիւնը։

Կոյրն հեգնեց.

—Ատիկա գերագոյն մարդասիրութիւնն է, և իմ մասիս, ես ո'չ մարդասէրները կ'սիրեմ ո'չ ալ բարոյականի վաճառականները։

Ռիվաս լրջութեամբ շարունակեց.

—Մի' յամառիք ըրած առաջարկութեանս անպատճառ հակառակելու։ Վերջապէս պիտի համաձայնինք իրարու հետ որովհետեւ իմ առաջարկութիւնս պատուաւոր է և ներքնապէս դուք ալ չէք կասկածիր այդ մասին։ Թողէք որ ինչո՞ւ ուղղակի ձեր աղջկան ալ կարծիքը չեմ հարցներ, քանի որ ինքն է նիւթը մեր այս խօսակցութեան...։

Լավեռտաքի յօնքերը պռստեցան.

—Կանչեցէք զայն, շարունակեց Մեքսիկացին։ Երեք հոգի խելք խելքի կ'ուտանք կ'մտածենք։

—Ձեր ուզածն այսօր անկարելի է, պատասխանեց Միշէլ։ Սէսիլ անկողնոյ կը ծառայէ...։

—Հիւա՞նդ է, հարցուց Ռիվաս։

—Թեթեւ արկած մը։ Սանդուղէն վար ինկաւ։

—Ծանր կերպով վիրաւորուած չէ՞։

—Ո'չ, նոյն իսկ շատ աւելի աղէկ է, և որպէս զի աւելի շուտ աղէկնայ, անոր համար գիւղական տուն մը վարձեցի Պիէվրի ձորին մէջ, Ժուա—ան—Ժօզասի շրջակաները։

—Շուտով պիտի մեկնի՞։

—Այս իրիկուն իսկ։

(Շար.) 64 Pierre Decourcelle